

**Էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակման ցանցին միանալու պայմանների
մասին և թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգը ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական
պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 714/2009 (ԵՀ)
կանոնակարգ**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 211 , 14/08/2009թ., էջ 0015 - 0035

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [3],

Քանի որ

1) էլեկտրաէներգիայի ներքին շուկան, որը սկսել է գործել 1999 թվականից, նպատակ ունի
Համայնքի բոլոր սպառողներին, լինեն նրանք քաղաքացիներ թե գործարարներ, ընձեռել
իրական ընտրության, նոր բիզնեսի և միջսահմանային առևտրի ավելի մեծ
հնարավորություններ՝ արդյունավետության ձեռքբերման, մրցակցային գների և
ծառայության ավելի բարձր ստանդարտների հասնելու և մատակարարման
անվտանգությանն ու կայունությանը նպաստելու համար,

2) էլեկտրաէներգիայի շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ Եվրոպական
պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի 2003/54/ԵՀ հրահանգը (4) և
«Էլեկտրաէներգիայի փոխանակման միջսահմանային ցանցերի հասանելիության
պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի

28-ի թիվ 1228/2005 (ԵՀ) կանոնակարգը (5) էական ներդրումներ են կատարել էլեկտրաէներգիայի նման ներքին շուկա ստեղծելու գործում,

3) ինչևէ, ներկայումս Համայնքում առանց խտրականության կամ անբարենպաստ պայմանների, հավասար պայմաններով էլեկտրաէներգիայի վաճառքի հետ կապված խոչընդոտներ կան: Մասնավորապես, խտրականությունը բացառող ցանցի մատչելիությունն ու կարգավորիչ վերահսկողության հավասարաչափ արդյունավետ մակարդակը դեռևս առկա չեն յուրաքանչյուր անդամ պետությունում, և մեկուսացած շուկաները շարունակում են գոյություն ունենալ,

4) Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Եվրոպայի էներգետիկ քաղաքականություն» կոչվող հաղորդագրությունն ընդգծեց էլեկտրաէներգիայի ներքին շուկան ամբողջական դարձնելու և Համայնքում էլեկտրաէներգիան իրացնող բոլոր ձեռնարկությունների ոլորտում մրցակցային հավասար պայմաններ ստեղծելու կարևորությունը: Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Գազի և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի հեռանկարներ» և «Գազի և էլեկտրաէներգիայի եվրոպական սեկտորում թիվ 1/2003 (ԵՀ) կանոնակարգի 17-րդ հոդվածի համաձայն իրականացվող ուսումնասիրություն (Վերջնական հաշվետվություն)» կոչվող հաղորդակցությունները ցույց տվեցին, որ ներկայիս կանոններն ու միջոցները անհրաժեշտ շրջանակ չեն տրամադրում և փոխկապակցման հնարավորություններ չեն ստեղծում, որոնք կօգնեին իրականացնել լավ գործող, արդյունավետ և բաց ներքին շուկա ունենալու նպատակը,

5) գոյություն ունեցող կարգավորող շրջանակը հավուր պատշաճի իրականացնելուց բացի, անհրաժեշտ է թիվ 1228/2003 կանոնակարգում (ԵՀ) նշված էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համար նախատեսված կարգավորող շրջանակը համապատասխանեցնել այդ հաղորդակցություններին,

6) ընդլայնված համագործակցություն և համակարգում անհրաժեշտ է, մասնավորապես, հաղորդման համակարգի օպերատորների միջև՝ միջսահմանային փոխադրման ցանցերի արդյունավետ և թափանցիկ հասանելիությունն ապահովելու և կազմակերպելու նպատակով ցանցի ծածկագրեր ստեղծելու և Համայնքում փոխադրման համակարգի համակարգված և բավարար առաջադեմ պլանավորում և արդյունավետ տեխնիկական զարգացում, այդ թվում՝ փոխկապակցման հնարավորություններ ապահովելու համար՝ պատշաճ կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրը: Ցանցի ծածկագրերը պետք է համապատասխանեն

շրջանակային ուղեցույցներին, որոնք իրենց բնույթով պարտադիր չեն (շրջանակային ուղեցույցներ) և մշակվում են Էներգետիկայի կարգավորիչների համակարգման գործակալությունը հիմնադրող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգով (6) նախատեսված () Էներգետիկայի կարգավորիչների համակարգման գործակալության կողմից (Գործակալությունը): Գործակալությունը պետք է, հիմնվելով փաստացի իրադրության վրա, դեր խաղա ցանցի ծածկագրերի նախնական տարբերակը՝ ներառյալ շրջանակային ուղեցույցներին դրանց համապատասխանությունը վերանայելու գործում և այն պետք է հնարավորություն ունենա խորհուրդ տալ, որ Հանձնաժողովն ընդունի այդ ծածկագրերը: Գործակալությունը պետք է գնահատի ցանցի ծածկագրերի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները և հնարավորություն ունենա խորհուրդ տալ, որ Հանձնաժողովն ընդունի այդ ծածկագրերը: Փոխադրման համակարգի օպերատորները պետք է իրենց ցանցերը շահագործեն ցանցի այդ ծածկագրերի համաձայն,

7) Համայնքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի օպտիմալ կառավարումն ապահովելու համար պետք է ստեղծվի էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգի օպերատորների եվրոպական ցանց (Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ): Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի առաջադրանքները պետք է իրականացվեն Համայնքի մրցակցային կանոններին համապատասխան, որոնք մնում են կիրառելի էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի որոշումների նկատմամբ: Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի առաջադրանքները պետք է լինեն հստակ որոշված, իսկ դրա աշխատանքային մեթոդը պետք է ապահովի էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի արդյունավետ, թափանցիկ և ներկայացուցչական բնույթը: Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի կողմից պատրաստված ցանցի ծածկագրերը նախատեսված չեն ոչ միջահամանային հարցերի հետ կապված ազգային ցանցի համար անհրաժեշտ ծածկագրերին փոխարինելու համար: Հաշվի առնելով, որ ավելի արդյունավետ առաջընթացի կարելի է հասնել տարածքային մակարդակով մոտեցման միջոցով՝ հաղորդման համակարգի օպերատորները պետք է համագործակցության ամբողջ կառուցվածքի մասշտաբով ստեղծեն տարածքային կառույցներ՝ ապահովելով, որ տարածքային մակարդակով արդյունքները համապատասխանեն ցանցի ծածկագրերին և Համայնքի մակարդակով ցանցի զարգացման ոչ պարտադիր տասնամյա ծրագրերին: Անդամ պետությունները խթանում են համագործակցությունը և դիտանցում տարածքային մակարդակով ցանցի արդյունավետությունը: Տարածքային մակարդակով

համագործակցությունը պետք է համապատասխանի էլեկտրաէներգիայի մրցակցային և արդյունավետ ներքին շուկա ստեղծելու առաջընթացին,

8) շուկայի բոլոր մասնակիցները շահագրգռված են էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ից ակնկալվող աշխատանքներով: Այդ նպատակով կարևոր է խորհրդակցության արդյունավետ գործընթացի , և խորհրդակցության գործընթացը խթանելու և պարզեցնելու նպատակով ստեղծված կառուցվածքների առկայությունը, ինչպիսիք են էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգման միությունը, ազգային կարգավորիչ մարմինները կամ Գործակալությունը, պետք է կարևոր դեր խաղան այդ գործում,

9) Համայնքում էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման մասով ավելի մեծ թափանցիկություն ապահովելու համար էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը պետք է մշակի, հրապարակի և պարբերաբար թարմացնի ցանցի զարգացման՝ Համայնքի մասշտաբով ոչ պարտադիր տասնամյա ծրագիր (Համայնքի մասշտաբ ցանցի զարգացման ծրագիր):
Էլեկտրաէներգիայի հաղորդման մրցակցային ցանցերը և տարածքային անհրաժեշտ փոխադարձ կապերը, որոնք կարևոր են առևտրի կամ մատակարարման անվտանգության տեսանկյունից, պետք է ընդգրկվեն ցանցի զարգացման այդ ծրագրում,

10) սույն Կանոնակարգով պետք է սահմանվեն հիմնական սկզբունքներ սակագների սահմանման և կարողությունների բաշխման մասով հետագա էական սկզբունքներ և մեթոդաբանությունները մանրամասն ներկայացնող ուղեցույցների ընդունման համար՝ տրամադրելով փոփոխվող հանգամանքներին արագ համապատասխանեցնելու նպատակով,

11) բաց մրցակցային շուկայում հաղորդման համակարգի օպերատորներին պետք է փոխհատուցեն այն ծախսերը, որոնք առաջացել են միջսահմանային հոսքերի առաջացման և դադարեցման հաղորդման համակարգերի օպերատորների սխալի արդյունքում իրենց ցանցերում էլեկտրաէներգիայի միջսահմանային հոսքերի առաջացման արդյունքում,

12) հաղորդման համակարգի օպերատորների միջև փոխհատուցման արդյունքում առաջացած վճարումները և ստացած գումարները պետք է հաշվի առնվեն ազգային ցանցի սակագները սահմանելիս,

13) համակարգին միջսահմանային միացման համար վճարվող գումարը կարող է էապես տարբերվել՝ կախված ներգրավված հաղորդման համակարգի օպերատորից և անդամ պետություններում կիրառվող սակագների սահմանման համակարգերի կառուցվածքի

տարբերությունների արդյունքում: Ուստի, առևտրի խաթարումից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել ներդաշնակեցման որոշակի աստիճան,

14) անհրաժեշտ է սահմանել տեղակայման երկարաժամկետ ազդանշանների պատշաճ համակարգ՝ հիմնված այն սկզբունքի վրա, որ ցանցին միանալու համար կատարվող վճարները պետք է արտացոլեն տվյալ տարածաշրջանում էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման հավասարակշռությունը ցանցին միանալու համար կատարվող վճարների միջև եղած տարբերությունների հիման վրա (արտադրողների և (կամ) սպառողների համար),

15) նպատակահարմար է սահմանել հեռավորությամբ պայմանավորված սակագներ կամ, տեղակայման համապատասխան ազդանշանների առկայության դեպքում, հատուկ սակագներ, որոնք կգանձվեն արտահանողներից կամ ներմուծողներից՝ ի լրումն ազգային ցանցին միանալու համար կատարվող վճարների,

16) էլեկտրաէներգիայի ներքին շուկայի արդյունավետ մրցակցության նախապայմանը ցանցի, այդ թվում՝ հաղորդման համակարգերում փոխկապակցման գծերի օգտագործման համար գանձվող ոչ խտրական ու թափանցիկ վճարներն են: Այդ գծերը պետք է լինեն հնարավորինս հասանելի և համապատասխանեն ցանցի անվտանգ գործունեության անվտանգության ստանդարտներին,

17) պետք է խուսափել անդամ պետությունների հաղորդման համակարգի օպերատորների կողմից կիրառվող անվտանգության, նախագծման և գործառնական տարբեր ստանդարտների արդյունքում առաջացող մրցակցության խաթարումից: Ավելին, շուկայի մասնակիցների համար պետք է ապահովվի թափանցիկությունը փոխադրումների հնարավորությունների և անվտանգության, նախագծման ու գործառնական այն ստանդարտների մասով, որոնք ազդում են փոխադրումների հնարավորությունների վրա,

18) ազգային կարգավորվող մարմինների և Հանձնաժողովի կողմից վերջին տարիներին իրականացված շուկայի դիտանցումը ցույց տվեց, որ թափանցիկության ներկայիս պահանջները և ենթակառուցվածքի մատչելիության վերաբերյալ կանոնները բավարար չեն էլեկտրաէներգիայի իսկական, լավ գործող, բաց և արդյունավետ ներքին շուկա ապահովելու համար,

19) համակարգի ֆիզիկական կարգավիճակի և արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավասար մատչելիությունն անհրաժեշտ է, որպեսզի շուկայի բոլոր մասնակիցները կարողանան գնահատել ընդհանուր պահանջարկի ու առաջարկի

իրավիճակը և բացահայտել մեծածախ գների տատանումների պատճառները: Այն ներառում է ավելի ճշգրիտ տեղեկություններ էլեկտրաէներգիայի արտադրության, առաջարկի և պահանջարկի, այդ թվում՝ կանխատեսումների, ցանցի ու փոխկապակցման կարողությունների, հոսքերի ու սպասարկման, հավասարակշռության և օգտագործվող կարողությունների վերաբերյալ,

20) շուկայում վստահությունը մեծացնելու համար դրա մասնակիցները պետք է վստահ լինեն, որ վիրավորական վարքագիծ ցուցաբերողները կարող են ենթարկվել արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ տույժերի: Իրավասու մարմիններին պետք է իրավասություն տրվի արդյունավետորեն ուսումնասիրելու շուկայի չարաշահման վերաբերյալ հայտարարությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է, որ իրավասու մարմիններին մատչելի լինեն այն տվյալները, որոնք տեղեկություններ են տրամադրում էլեկտրաէներգիա մատակարարող ձեռնարկությունների կայացրած օպերատիվ որոշումների վերաբերյալ: Էլեկտրաէներգիայի շուկայում համապատասխան շատ որոշումներ ընդունվում են արտադրողների կողմից, որոնք դրանց վերաբերող տեղեկությունները ֆիքսված ժամանակահատվածում պետք է հասանելի ու մատչելի պահեն իրավասու մարմինների համար: Իրավասու մարմինները պետք է, բացի այդ, պարբերաբար դիտանցեն հաղորդման համակարգի օպերատորների համապատասխանությունը կանոններին. Փոքր արտադրողները, որոնք շուկան խաթարելու իրական հնարավորություն չունեն, պետք է ազատվեն այդ պարտականությունից,

21) պետք է սահմանվեն կանոններ գերբեռնվածության կառավարման ընթացակարգերից ստացվող շահույթի օգտագործման վերաբերյալ, եթե տվյալ էլեկտրահաղորդման գծի հատուկ բնույթը չի արդարացնում այդ կանոններից ազատումը,

22) գերբեռնվածության խնդիրների կառավարման միջոցով հաղորդման համակարգի օպերատորներին ու շուկայի մասնակիցներին պետք է տրամադրվեն ճիշտ տնտեսական ազդակներ՝ հիմնված լինեն շուկայական մեխանիզմների վրա,

23) անհրաժեշտ է խթանել նոր հիմնական ենթակառուցվածքների ոլորտում կատարվող ներդրումներին՝ ապահովելով էլեկտրաէներգիայի ներքին շուկայի կանոնավոր գործունեությունը: Հաստատուն հոսանքի՝ բացառություն կազմող էլեկտրահաղորդման գծերի դրական ազդեցությունը մեծացնելու և մատակարարման անվտանգությունն ապահովելու համար ծրագրերի պլանավորման փուլում պետք է ստուգվի շուկայական տոկոսն ու ընդունվեն գերբեռնվածության կառավարման կանոններ: Եթե հաստատուն

հոսանքի էլեկտրահաղորդման գծերը տեղադրված են ավելի քան մեկ անդամ պետության տարածքում, Գործակալությունը, որպես վերջին միջոց, պետք է ուսումնասիրի ազատում շնորհելու հարցումը իր միջսահմանային խնդիրների մասին ավելի լավ պատկերացում կազմելու և վարչական կառավարումը հեշտացնելու նպատակով: Ավելին, հաշվի առնելով ազատում ստացած հիմնական ենթակառուցվածքային ծրագրերի գործածության բացառիկ ռիսկի նկարագիրը՝ մատակարարումից ու արտադրությունից տոկոս ունեցող ձեռնարկություններին պետք է հնարավորություն տրվի ժամանակավորապես շեղվել տվյալ ծրագրերին առնչվող ոչ պարտադիր կանոններից: Թիվ 1228/2003 կանոնակարգի (ԵՀ) համաձայն շնորհված ազատումը կիրառվում է մինչև ազատում շնորհելու մասին որոշման մեջ նշված ժամկետի ավարտը,

24) էլեկտրաէներգիայի ներքին շուկայի կանոնավոր գործունեությունն ապահովելու համար պետք է դրույթ նախատեսվի այն ընթացակարգերի մասով, որոնք թույլ են տալիս, ի թիվս այլոց, Հանձնաժողովի կողմից սակագների սահմանման ու կարողությունների բաշխման վերաբերյալ որոշումների ու ուղեցույցների ընդունումը՝ ապահովելով անդամ պետությունների կարգավորող մարմինների ներգրավումն այդ գործընթացում (հարկ եղած դեպքում եվրոպական իրենց ասոցիացիայի միջոցով): Կարգավորող մարմինները անդամ պետությունների համապատասխան այլ մարմինների հետ միասին կարևոր դեր են խաղում էլեկտրաէներգիայի ներքին շուկայի կանոնավոր գործունեության խթանման գործում,

25) ազգային կարգավորող մարմինները պետք է ապահովեն սույն Կանոնակարգում ներառված կանոններին և դրանց համաձայն ընդունված ուղեցույցներին համապատասխանությունը,

26) անդամ պետությունները և ազգային իրավասու մարմինները պետք է ապահովեն համապատասխան տեղեկությունների տրամադրումը Հանձնաժողովին: Հանձնաժողովն այս տեղեկությունները պետք է գաղտնի պահի: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պետք է հնարավորություն ունենա պահանջել համապատասխան տեղեկությունները անմիջապես համապատասխան ձեռնարկություններից՝ պայմանով, որ ազգային իրավասու մարմինները տեղեկացված լինեն այդ մասին,

27) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն տույժերի վերաբերյալ, որոնք կիրառելի են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների նկատմամբ, և ապահովեն այդ տույժերի իրականացումը: Նշված տույժերը պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

28) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկման գծով լիազորությունների իրականացման կարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն [7],

29) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է իրավասու լինի սահմանել և ընդունել սույն Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար պահանջվող ներդաշնակեցման նվազագույն աստիճանն ապահովելու համար անհրաժեշտ ուղեցույցներ: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու և այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,

30) քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, այն է՝ էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակումների համար ներդաշնակեցված շրջանակի ստեղծումը, չի կարող բավարար կերպով իրականացվել անդամ պետությունների կողմից և, հետևաբար, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

31) հաշվի առնելով թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգում կատարվող փոփոխությունների շրջանակը՝ պարզության և ռացիոնալիզացման նպատակներով ցանկալի է, որ տվյալ դրույթները վերամշակվեն՝ դրանք համախմբելով մեկ միասնական տեքստում՝ նոր Կանոնակարգում,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Կանոնակարգը ուղղված է՝

ա) էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակման վերաբերյալ արդար կանոնների սահմանմանը և դրանով էլեկտրաէներգիայի ներքին շուկայում մրցակցության մեծացմանը՝ հաշվի առնելով ազգային և տարածաշրջանային շուկաների հատուկ առանձնահատկությունները: Այն ներառում է էլեկտրաէներգիայի միջսահմանային հոսքերի համար փոխհատուցման մեխանիզմի ստեղծումն ու միջսահմանային փոխանցումների համար գանձվող վճարների մասով ներդաշնակեցված սկզբունքների սահմանումը և ազգային հաղորդման համակարգերի միջև փոխկապակցման առկա կարողությունների բաշխումը.

բ) էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգության բարձր մակարդակ ունեցող լավ գործող և թափանցիկ մեծածախ շուկայի ստեղծմանը: Դրանով նախատեսվում են մեխանիզմներ էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակման վերաբերյալ կանոնները ներդաշնակեցնելու համար:

Հոդված 2

Սահմանումները

1. Սույն Կանոնակարգի նպատակներով՝ «էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/72/ԵՀ հրահանգի [8] 2-րդ հոդվածում նշված սահմանումները կիրառվում են՝ բացառությամբ «էլեկտրահաղորդման գիծ» սահմանումից, որը պետք է փոխարինվի հետևյալ սահմանմամբ.

էլեկտրահաղորդման գիծ՝ հաղորդման գիծ, որը հատում կամ միացնում է անդամ պետությունների միջև եղած սահմանները և միավորում անդամ պետությունների հաղորդման ազգային համակարգերը:

2. Սույն Կանոնակարգում կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա) կարգավորող մարմիններ՝ 2009/72/ԵՀ հրահանգի 35(1) հոդվածում նշված կարգավորող մարմինները.

բ) միջսահմանային հոսք՝ անդամ պետության հաղորդման ցանցում էլեկտրաէներգիայի ֆիզիկական հոսք, որն առաջանում է այդ անդամ պետության սահմաններից դուրս, սակայն դրա հաղորդման ցանցում արտադրողների և (կամ) սպառողների գործողությունների արդյունքում.

գ) գերբեռնվածություն՝ իրավիճակ, որի դեպքում հաղորդման ազգային ցանցերը կապող էլեկտրահաղորդման գիծը չի կարող ապահովել շուկայի մասնակիցների պահանջարկի արդյունքում միջազգային առևտրից առաջացող ամբողջ ֆիզիկական հոսքը էլեկտրահաղորդման գծի կամ հաղորդման համապատասխան ազգային համակարգերի կարողությունների պակասի պատճառով.

դ) հայտարարագրված արտահանում՝ անդամ պետությունում էլեկտրաէներգիայի բաշխում հիմնական պայմանագրային պայմանավորվածությունների հիման վրա, որի նպատակն այն է, որ էլեկտրաէներգիայի միաժամանակյա համապատասխան ընդունումը (հայտարարագրված ներմուծում) տեղի ունենա մեկ այլ անդամ պետությունում կամ երրորդ երկրում.

ե) հայտարարագրված փոխանցում՝ հանգամանք, որի դեպքում տեղի է ունենում էլեկտրաէներգիայի հայտարարագրված արտահանում, որի գործարքի նշանակված վայրը մի երկիր է, որտեղ տեղի չի ունենում էլեկտրաէներգիայի ուղարկումը կամ միաժամանակյա համապատասխան ընդունումը.

զ) հայտարարագրված ներմուծում՝ էլեկտրաէներգիայի ընդունում անդամ պետությունում կամ երրորդ երկրում և էլեկտրաէներգիայի միաժամանակյա ուղարկում (հայտարարագրված արտահանում) մեկ այլ անդամ պետությունում.

է) էլեկտրահաղորդման նոր գիծ՝ մինչև 2003 թվականի օգոստոսի 4-ը չավարտված էլեկտրահաղորդման գիծ:

Միայն 13-րդ հոդվածում նշված փոխադարձ հաղորդման համակարգի օպերատորների փոխհատուցման մեխանիզմի նպատակներով՝ եթե երկու կամ ավելի անդամ պետությունների հաղորդման ցանցերը ամբողջությամբ կամ մասամբ կազմում են հսկողության մեկ բլոկի մի մաս, ապա այդ հսկողության բլոկը համարվում է տվյալ անդամ պետություններից մեկի հաղորդման ցանցի մի մաս հսկողության բլոկերի միջև հոսքերից խուսափելու նպատակով, որոնք սույն պարբերության առաջին ենթապարբերության (բ) կետի համաձայն համարվում են միջսահմանային հոսքեր և որոնք, 13-րդ հոդվածի համաձայն, առաջ են բերում փոխհատուցման վճարներ:

Հոդված 3

Հաղորդման համակարգի օպերատորների հաստատումը

1. Հանձնաժողովն ուսումնասիրում է հաղորդման համակարգի օպերատորի հաստատման մասին որոշման վերաբերյալ ցանկացած ծանուցում, ինչպես նշված է 2009/72/ԵՀ հրահանգի 10(6) հոդվածում, անմիջապես ստանալուց հետո: Այդ ծանուցումն ստանալու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովը համապատասխան ազգային կարգավորող մարմին է ներկայացնում 2009/72/ԵՀ կանոնակարգի 10(2) կամ 11-րդ և 9-րդ հոդվածների հետ դրա համապատասխանության վերաբերյալ իր եզրակացությունը:

Առաջին ենթապարբերության մեջ նշվածի վերաբերյալ եզրակացությունը պատրաստելիս Հանձնաժողովը կարող է Գործակալությանը խնդրել իրեն տրամադրել ազգային կարգավորող մարմնի կայացրած որոշման վերաբերյալ իր եզրակացությունը: Նման դեպքում առաջին ենթապարբերության մեջ նշված երկամսյա ժամկետը կերկարաձգվի և երկու ամսով:

Հանձնաժողովի եզրակացության բացակայության դեպքում համարվում է, որ առաջին և երկրորդ ենթապարբերություններում նշված ժամանակահատվածներում Հանձնաժողովը չպետք է կարգավորող մարմնի կայացրած որոշման վերաբերյալ առարկություններ բարձրացնի:

2. Հանձնաժողովի կողմից եզրակացությունը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում ազգային կարգավորող մարմինը պետք է վերջնական որոշում ընդունի՝ կապված հաղորդման համակարգի օպերատորի հաստատման հետ՝ առավելագույնս ուշադրություն դարձնելով այդ եզրակացությանը: Կարգավորող մարմնի որոշումը և Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում են միասին:

3. Ընթացակարգի ընթացքում ցանկացած պահի կարգավորող մարմինները և (կամ) Հանձնաժողովը կարող են արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող հաղորդման համակարգի օպերատորից և (կամ) ձեռնարկությունից պահանջել իրենց առաջադրանքների կատարման հետ կապված ցանկացած տեղեկություն՝ համաձայն սույն հոդվածի:

4. Կարգավորող մարմինները և Հանձնաժողովը պահպանում են առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

5. Հանձնաժողովը կարող է ընդունել սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների կիրառման համար անհրաժեշտ ընթացակարգի մանրամասները սահմանող ուղեցույցներ: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 23(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

6. Եթե Հանձնաժողովը հաղորդման համակարգի օպերատորի հաստատման վերաբերյալ ծանուցում է ստացել համաձայն 2009/72/ԵՀ հրահանգի 9(10) հոդվածի, ապա Հանձնաժողովը հաստատման վերաբերյալ որոշում է կայացնում: Կարգավորող մարմինը կատարում է Հանձնաժողովի որոշումը:

Հոդված 4

Էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը

Հաղորդման համակարգի բոլոր օպերատորները Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ միջոցով համագործակցում են Համայնքի մակարդակով՝ խթանելու էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ձևավորմանը և գործունեությանը ու միջսահմանային առևտրին և ապահովելու էլեկտրաէներգիայի հաղորդման եվրոպական ցանցի օպտիմալ կառավարումը, համակարգված գործունեությունն ու տեխնիկական գնահատումը:

Հոդված 5

Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի ստեղծումը

1. Մինչև 2011 թվականի մարտի 3-ը էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգի օպերատորները Հանձնաժողովին և Գործակալությանը պետք է ներկայացնեն կանոնադրության նախագիծը, անդամների ցանկը և ընթացակարգային նախնական կանոնները՝ ներառյալ այլ շահագրգիռ կողմերի, սահմանվող էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի հետ խորհրդակցությանն առնչվող ընթացակարգային կանոնները:

2. Վերևում թվարկվածը ստանալու օրվանից երկու ամիսների ընթացքում Գործակալությունը, շահագրգիռ բոլոր կողմերին ներկայացնող կազմակերպությունների՝ մասնավորապես համակարգի օգտագործողների՝ ներառյալ բաժանորդների հետ պաշտոնապես խորհրդակցելու հետո, պետք է Հանձնաժողովին ներկայացնի

կանոնադրության նախագծի, անդամների ցանկի և ընթացակարգային նախնական կանոնների վերաբերյալ իր եզրակացությունը:

3. Հանձնաժողովը եզրակացություն է կայացնում կանոնադրության նախագծի, անդամների ցանկի և ընթացակարգային նախնական կանոնների վերաբերյալ՝ հաշվի առնելով 2-րդ պարբերության մեջ նշված Գործակալության եզրակացությունը և այդ Գործակալության եզրակացությունը ստանալու օրվանից հետո երեք ամիսների ընթացքում:

4. Հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո երեք ամիսների ընթացքում հաղորդման համակարգի օպերատորները ստեղծում են էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը, ընդունում և հրապարակում են դրա կանոնադրությունն ու ընթացակարգային կանոնները:

Հոդված 6

Ցանցի ծածկագրերի ստեղծումը

1. Հանձնաժողովը, Գործակալության, էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի և համապատասխան այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո, կազմում է տարեկան առաջնահերթության ցանկ, որտեղ նշվում են 8(6) հոդվածով նախատեսված վայրերը, որոնք պետք է ընդգրկվեն ցանցի ծածկագրերի մշակման գործում:

2. Հանձնաժողովը Գործակալությունից պահանջում է վեց ամիսը չգերազանցող ողջամիտ ժամկետներում ներկայացնել առաջնահերթության ցանկում նշված վայրերին վերաբերող ցանցերի ծածկագրերի մշակման համար անհրաժեշտ հստակ և անաչառ սկզբունքները սահմանող ոչ պարտադիր շրջանակային ուղեցույց (շրջանակային ուղեցույց)՝ համաձայն 8(7) հոդվածի: Յուրաքանչյուր շրջանակային ուղեցույցը պետք է նպաստի խտրականության բացառմանը, շուկայի արդյունավետ մրցակցությանն ու որակյալ գործունեությանը: Գործակալության կողմից ստացված պատճառաբանված հարցման հիման վրա Հանձնաժողովը կարող է երկարաձգել ժամկետը:

3. Գործակալությունը, երկու ամսից ոչ պակաս ժամկետներում, պաշտոնապես խորհրդակցում է էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի և շրջանակային ուղեցույցով հետաքրքրվող այլ համապատասխան անձանց հետ՝ բաց և թափանցիկ ձևով:

4. Եթե Հանձնաժողովը համարի, որ շրջանակային ուղեցույցը չի նպաստում խտրականության բացառմանը, շուկայի արդյունավետ մրցակցությանն ու որակյալ

գործունեությանը, այն կարող է Գործակալությունից պահանջել ողջամիտ ժամկետներում վերանայել շրջանակային ուղեցույցը և այն կրկին ներկայացնել Հանձնաժողովին:

5. Եթե Գործակալությանը չի հաջողվում ներկայացնել կամ կրկին ներկայացնել շրջանակային ուղեցույց 2-րդ կամ 4-րդ պարբերությունների համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում, ապա Հանձնաժողովն ինքն է մշակում տվյալ շրջանակային ուղեցույցը:

6. Հանձնաժողովը էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ից պահանջում է 12 ամիսը չգերազանցող ողջամիտ ժամկետում Գործակալությանը ներկայացնել ցանցի ծածկագիր, որը համապատասխանում է համապատասխան շրջանակային ուղեցույցին:

7. Ցանցի ծածկագիրը ստանալուց հետո եռամսյա ժամկետում, որի ընթացքում Գործակալությունը կարող է պաշտոնապես խորհրդակցել համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, Գործակալությունը էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ին ցանցի ծածկագրի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն է տրամադրում:

8. Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը կարող է փոփոխել ցանցի ծածկագիրը՝ ելնելով Գործակալության եզրակացությունից, և այն կրկին ներկայացնել Գործակալությանը:

9. Եթե Գործակալությունը համոզվում է, որ ցանցի ծածկագիրը համապատասխանում է համապատասխան շրջանակային ուղեցույցին, ապա Գործակալությունը ցանցի ծածկագիրը ներկայացնում է Հանձնաժողովին և կարող է խորհուրդ տալ, որ այն ընդունվի ողջամիտ ժամկետներում: Հանձնաժողովն այդ կապակցությամբ ներկայացնում է ցանցի ծածկագիրը չընդունելու իր պատճառները:

10. Եթե էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ին չի հաջողվել 6-րդ պարբերության համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում մշակել ցանցի ծածկագիր, Հանձնաժողովը կարող է պահանջել, որ Գործակալությունը մշակի ցանցի ծածկագրի նախնական տարբերակը համապատասխան շրջանակային ուղեցույցի հիման վրա: Գործակալությունը ցանցի ծածկագրի նախնական տարբերակը նախապատրաստելու ընթացքում կարող է նախաձեռնել հետագա խորհրդակցություն՝ համաձայն սույն պարբերության: Գործակալությունը պետք է սույն պարբերության համաձայն պատրաստած ցանցի ծածկագրի նախնական տարբերակը ներկայացնի Հանձնաժողովին և կարող է խորհուրդ տալ ընդունել այն:

11. Հանձնաժողովը կարող է իր սեփական նախաձեռնությամբ կամ, սույն հոդվածի 9-րդ պարբերության համաձայն, Գործակալության խորհրդով 8(6) հոդվածում թվարկված վայրերում ընդունել մեկ կամ ավելի ծածկագրեր, եթե Էլեկտրաէներգիայի ՓԸՕԵՑ-ին չի հաջողեցրել մշակել ցանցի ծածկագիր կամ եթե Գործակալությունը ձախողել է սույն հոդվածի 10-րդ պարբերության մեջ նշված ցանցի ծածկագրի նախնական տարբերակը մշակելը:

Եթե Հանձնաժողովն իր սեփական նախաձեռնությամբ առաջարկում է ընդունել ցանցի ծածկագիրը, Հանձնաժողովը երկու ամսից ոչ պակաս ժամանակահատվածում խորհրդակցում է Գործակալության, Էլեկտրաէներգիայի ՓԸՕԵՑ-ի և ցանցի ծածկագրով հետաքրքրված բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 23(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

12. Սույն հոդվածը չի հակասում Հանձնաժողովի՝ 18-րդ հոդվածում նշված ուղեցույցներն ընդունելու և փոփոխելու իրավունքին:

Հոդված 7

Ցանցի ծածկագրերի փոփոխությունները

1. 6-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանցի ցանկացած ծածկագրի փոփոխությունների նախագծի վերաբերյալ կարող է առաջարկ ներկայացվել Գործակալությանը այն անձանց կողմից, ովքեր հավանաբար հետաքրքրություն են ցուցաբերում այդ ցանցի ծածկագրի նկատմամբ՝ ներառյալ Էլեկտրաէներգիայի ՓԸՕԵՑ-ը, հաղորդման համակարգի օպերատորները, համակարգի օգտագործողներն ու հաճախորդները: Գործակալությունը կարող է փոփոխություններ կատարելու առաջարկ ներկայացնել նաև իր սեփական նախաձեռնությամբ:

2. Գործակալությունը, թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգի 10-րդ հոդվածի համաձայն, խորհրդակցում է բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Այս գործընթացից հետո Գործակալությունը կարող է փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված առաջարկություններ անել Հանձնաժողովին՝ բացատրելով, թե այդ առաջարկություններն

ինչպես են համապատասխանում 6(2) հոդվածով սահմանված ցանցի ծածկագրերի նպատակներին:

3. Հանձնաժողովը, հաշվի առնելով Գործակալության առաջարկները, կարող է ընդունել 6-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանկացած ցանցի ծածկագրի փոփոխությունները: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 54(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Առաջարկված փոփոխությունների՝ 23(2) հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն իրականացվող քննարկումը սահմանափակվում է առաջարկված փոփոխության հետ առնչվող ասպեկտների քննարկմամբ: Այդ առաջարկված փոփոխությունները չեն հակասում այլ փոփոխություններին, որոնք Հանձնաժողովը կարող է առաջարկել:

Հոդված 8

Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի խնդիրները

1. Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը սույն հոդվածի 6-րդ պարբերության մեջ նշված վայրերում ցանցի ծածկագրեր է մշակում՝ ելնելով Հանձնաժողովի կողմից իրեն ուղղված պահանջից՝ համաձայն 6(6) հոդվածի:

2. Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը կարող է 6-րդ պարբերության մեջ նշված վայրերում ցանցի ծածկագրեր մշակել՝ նպատակ ունենալով իրականացնել 4-րդ հոդվածում նշված նպատակները, եթե այս ցանցի ծածկագրերը չեն համապատասխանում Հանձնաժողովի կողմից իրեն հասցեագրված պահանջի շրջանակներում ընդգրկված վայրերին: Այս ցանցի ծածկագրերը ներկայացվում են Գործակալությանը՝ եզրակացություն կազմելու նպատակով: Այդ եզրակացությունը մանրամասն հաշվի կառնվի Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը կողմից:

3. Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ն ընդունում է.

ա) ցանցի աշխատանքի ընդհանուր գործիքներ՝ ապահովելու համար ցանցի համակարգումը բնականոն և արտակարգ իրավիճակներում՝ ներառյալ ընդհանուր միջադեպերի դասակարգման սանդղակն ու հետազոտության ծրագրերը.

բ) Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման տասնամյա ոչ պարտադիր նախագիծ (Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծ)՝ ներառյալ արտադրական

ռեսուրսների հուսալիության եվրոպական հեռանկարը, յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ.

գ) առաջարկություններ, որոնք վերաբերում են Համայնքի և երրորդ երկրի հաղորդման համակարգի օպերատորների միջև տեխնիկական համագործակցության համախմբմանը.

դ) տարեկան աշխատանքային ծրագիր.

ե) տարեկան հաշվետվություն.

զ) ամռանը և ձմռանը էլեկտրաէներգիայի համամասնական արտադրության կանխատեսումները տարեկան կտրվածքով:

4. 3-րդ պարբերության (բ) կետում նշված արտադրական ռեսուրսների հուսալիության եվրոպական հեռանկարն ընդգրկում է էլեկտրաէներգիայի ներկայիս և նախատեսված պահանջարկը բավարարելու համար էլեկտրաէներգիայի համակարգի ընդհանուր հուսալիությունը հաջորդ հինգ տարիների, ինչպես նաև այդ հեռանկարի ամսաթվից սկսած հինգից տասը տարիների միջև ընկած ժամանակահատվածի համար: Արտադրական ռեսուրսների հուսալիության եվրոպական հեռանկարը հիմնվում է հաղորդման համակարգի յուրաքանչյուր անհատ օպերատորի կողմից կազմվող արտադրական ռեսուրսների հուսալիության ազգային հեռանկարի հիման վրա:

5. 3-րդ պարբերության (դ) կետում նշված տարեկան աշխատանքային ծրագիրը պետք է պարունակի պատրաստվելիք ցանցի ծածկագրերի ցանկն ու նկարագրությունը, ցանցի գործունեությունը համակարգելու նախագիծը, ինչպես նաև հետազոտության և զարգացման գործողություններ, որոնք պետք է իրականացվեն այդ տարվա ընթացքում, և ինդիկատիվ օրացույց:

6. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված ցանցի ծածկագրերը պետք է ընդգրկեն հետևյալ ոլորտները՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տարածաշրջանային հատուկ առանձնահատկությունները.

ա) ցանցի անվտանգության և հուսալիության կանոններ, այդ թվում՝ ցանցի գործունեության անվտանգության համար տեխնիկական հաղորդման օգտագործվող կարողությունների վերաբերյալ կանոններ,

բ) ցանցային միացումների վերաբերյալ կանոններ,

գ) երրորդ կողմի մուտքի կանոններ,

- դ) տվյալների փոխանակման և կարգավորման կանոններ,
- ե) համատեղ աշխատանքի կանոններ,
- զ) գործառնական ընթացակարգեր արտակարգ իրավիճակներում,
- է) կարողությունների բաշխման և գերբեռնվածության կառավարման կանոններ,
- ը) ցանցի մատչելիության ծառայությունների և համակարգի հավասարակշռման տեխնիկական և գործառնական դրույթի վերաբերյալ առավաճառքի կանոններ,
- թ) թափանցիկության վերաբերյալ կանոններ,
- ժ) հավասարակշռության կանոններ, այդ թվում՝ ցանցին առնչվող պահուստային հզորության կանոններ,
- ժա) էլեկտրահաղորդման ներդաշնակեցված սակագնային համակարգերին առնչվող կանոններ, այդ թվում՝ տեղակայման ազդանշաններ ու փոխադարձ հաղորդման համակարգի օպերատորների փոխհատուցման կանոններ. և
- ժբ) էներգաարդյունավետություն՝ կապված էներգացանցի հետ:

7. Ցանցի ծածկագրերը պետք է մշակվեն՝ ելնելով միջսահմանային ցանցի խնդիրներից և շուկայի ինտեգրմանը վերաբերող խնդիրներից և չպետք է հակասեն անդամ պետությունների՝ ազգային ցանցի ծածկագրեր հաստատելու իրավունքին, որոնք չեն ազդում միջսահմանային առևտրի վրա:

8. Էլեկտրաէներգիայի ՓՕԵՑ-ը պետք է դիտանցի և վերլուծի ցանցի ծածկագրերի և 6(11) հոդվածի համաձայն Հանձնաժողովի կողմից ընդունված ուղեցույցների իրականացումը և դրանց ազդեցությունները շուկայի ինտեգրմանն ուղղված կիրառելի կանոնների ներդաշնակեցման վրա: Էլեկտրաէներգիայի ՓՕԵՑ-ը պետք է Գործակալությանը զեկուցի իր ձեռք բերած արդյունքների մասին և ներառի սույն հոդվածի 3-րդ պարբերության (ե) կետում նշված տարեկան հաշվետվության վերլուծության արդյունքները:

9. Էլեկտրաէներգիայի ՓՕԵՑ-ը պետք է մատչելի դարձնի Գործակալության պահանջած ամբողջ տեղեկությունները՝ իր խնդիրները 9(1) հոդվածի համաձայն իրականացնելու համար:

10. Էլեկտրաէներգիայի ՓՕԵՑ-ը պետք է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ ընդունի և հրապարակի Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծ: Համայնքի

մասշտաբով ցանցի զարգացման նախագիծը պետք է ընդգրկի ինտեգրված ցանցի մոդելավորումը, սցենարի զարգացումը, արտադրական ռեսուրսների հասանելիության եվրոպական հեռանկարը և համակարգի ճկունության գնահատումը:

Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծը պետք է, մասնավորապես,

ա) ներդրումներ կատարելու պլաններ կազմի՝ հաշվի առնելով 12(1) հոդվածում նշված տարածաշրջանային ներդրումների պլանները և, անհրաժեշտության դեպքում, ցանցերի պլանավորման Համայնքային ասպեկտները՝ ներառյալ անդրեվրոպական էներգացանցերին ուղղված ուղեցույցները՝ համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1364/2006/ԵՀ որոշման (9),

բ) կապված միջսահմանային էլեկտրահաղորդման գծերի հետ՝ հիմնվի նաև ցանցի տարբեր օգտագործողների ողջամիտ կարիքների վրա և 2009/72/ԵՀ հրահանգի 8-րդ և 22-րդ հոդվածներում նշված ներդրողներից ինտեգրի երկարաժամկետ պարտավորություններ և

գ) բացահայտի ներդրումների բացերը՝ մասնավորապես նրանք, որոնք կապված են միջսահմանային կարողությունների հետ:

Ինչ վերաբերում է երկրորդ ենթապարբերության (գ) կետին, թույլտվության տարբեր ընթացակարգերից և գործունեություններից ծագող ցանցի միջսահմանային կարողությունների ընդլայնման առջև ծառայած խոչընդոտների վերանայումը կարող է կցվել Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագծին:

11. Գործակալությունը պետք է վերանայի ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրերը՝ գնահատելու համար դրանց համապատասխանությունը Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրին: Եթե Գործակալությունը անհամապատասխանություններ է նկատում ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրի և Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրի միջև, այն պետք է խորհուրդ տա փոփոխություններ կատարել ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրում կամ Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրում՝ ըստ անհրաժեշտության: Եթե ցանցի զարգացման ազգային տասնամյա այդ ծրագիրը մշակվում է 2009/72/ԵՀ հրահանգի 22-րդ հոդվածի համաձայն, ապա Գործակալությունը պետք է առաջարկի, որ ազգային կարգավորող իրավասու մարմինը փոփոխություններ կատարի ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրում՝ համաձայն այդ հրահանգի 22(7) հոդվածի, և այդ մասին տեղեկացնի Հանձնաժողովին:

12. Հանձնաժողովի պահանջով էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ը 18-րդ հոդվածում նշված ուղեցույցների ընդունման վերաբերյալ իր տեսակետը ներկայացնում է Հանձնաժողովին:

Հոդված 9

Գործակալության կողմից դիտանցումը

1. Գործակալությունը դիտանցում է էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ի 8(1), (2) և (3) հոդվածում նշված խնդիրների իրականացումը և Հանձնաժողովին հաշվետվություն ներկայացնում դրա վերաբերյալ:

Գործակալությունը դիտանցում է էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ի կողմից 8(2) հոդվածի համաձայն մշակված ցանցի ծածկագրերի և 6(1) – (10) հոդվածի համաձայն մշակված, սակայն Հանձնաժողովի կողմից 6(11) հոդվածի համաձայն չընդունված ցանցի ծածկագրերի իրականացումը: Եթե էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ին չի հաջողվում իրականացնել ցանցի այդ ծածկագրերը, Գործակալությունը էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ից պահանջում է ներկայացնել հիմնավորված բացատրություն ձախողման պատճառների վերաբերյալ: Գործակալությունը Հանձնաժողովին տեղեկացնում է այդ բացատրության մասին ու ներկայացնում իր եզրակացությունը դրա վերաբերյալ:

Գործակալությունը դիտանցում և վերլուծում է ցանցի ծածկագրերի և 6(11) հոդվածի համաձայն Հանձնաժողովի կողմից ընդունված ուղեցույցների իրականացումը և դրանց ազդեցությունները շուկայի ինտեգրման հեշտացմանը ուղղված կիրառելի կանոնների ներդաշնակեցման, ինչպես նաև ոչ խտրական, արդյունավետ մրցակցության ու շուկայի արդյունավետ գործունեության վրա և Հանձնաժողովին հաշվետվություն ներկայացնի դրա վերաբերյալ:

2. էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ը Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրի նախագիծը, տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը, այդ թվում՝ խորհրդակցության գործընթացին վերաբերող տեղեկություններն ու 8(3) հոդվածում նշված այլ փաստաթղթերը ներկայացնում է Գործակալությանը վերջինիս եզրակացությունը ստանալու համար:

Ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում Գործակալությունը էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ին ու Հանձնաժողովին ներկայացնում է հիմնավորված եզրակացություն, ինչպես նաև առաջարկություններ, եթե այն համարում է, որ էլեկտրաէներգիայի ՓՇՕԵՑ-ի կողմից

ներկայացված տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը կամ Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրի նախագիծը չեն նպաստում ոչ խտրական, արդյունավետ մրցակցությանն ու շուկայի արդյունավետ գործունեությանը կամ երրորդ կողմի համար միջսահմանային կապին ազատ մուտքի բավարար մակարդակի ապահովմանը:

Հոդված 10

խորհրդատվությունները

1. 8(1), (2) և (3) հոդվածում նշված ցանցի ծածկագրերը, Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրի նախագիծը և տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը նախապատրաստելիս էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը իրականացնում է խորհրդատվության ինտենսիվ գործընթաց վաղ փուլում բաց ու թափանցիկ ձևով՝ ներառելով շուկայի բոլոր համապատասխան մասնակիցներին և, մասնավորապես, բոլոր շահագրգիռ կողմերը ներկայացնող կազմակերպություններին՝ 5(1) հոդվածում նշված ընթացակարգային կանոնների համաձայն: Այդ խորհրդատվությունը ընդգրկում է նաև ազգային կարգավորող մարմիններին և ազգային այլ մարմիններին, մատակարարող և արտադրող ձեռնարկություններին, համակարգի օգտագործողներին՝ ներառյալ բաժանորդները, բաշխման համակարգի օպերատորներին՝ ներառյալ համապատասխան արդյունաբերական ասոցիացիաները, տեխնիկական մարմինները և շահագրգիռ անձանց պլատֆորմները: Այն պետք է նպատակաուղղված լինի որոշում կայացնելու ընթացում համապատասխան բոլոր մարմինների տեսակետների ու առաջարկների նույնականացմանը:

2. 1-ին պարբերության մեջ նշված խորհրդատվության վերաբերյալ բոլոր փաստաթղթերն ու արձանագրությունները հրապարակվում են:

3. Նախքան 8(1), (2) և (3) հոդվածում նշված տարեկան աշխատանքային ծրագիրն ու ցանցի ծածկագրերն ընդունելը էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ը նշում է, թե խորհրդատվության ընթացքում ստացված դիտարկումներն ինչպես են հաշվի առնվել: Այն պետք է նշի պատճառները, եթե դիտարկումները հաշվի չեն առնվել:

Հոդված 11

Ծախսերը

4–12–րդ հոդվածներում նշված էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ գործողությունների հետ կապված ծախսերը հոգում են հաղորդման համակարգի օպերատորները, և այդ ծախսերը հաշվի են առնվում սակագները հաշվարկելիս: Կարգավորող մարմիններն այդ ծախսերը հաստատում են միայն այն դեպքում, երբ դրանք հիմնավորված և համաչափ են:

Հոդված 12

Հաղորդման համակարգի օպերատորների տարածաշրջանային համագործակցությունը

1. Հաղորդման համակարգի օպերատորները տարածաշրջանային համագործակցություն են հաստատում էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ–ի շրջանակում՝ խթանելու համար 8(1), (2) և (3) հոդվածում նշված առաջադրանքների իրականացմանը: Մասնավորապես, յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ նրանք հրապարակում են տարածաշրջանային ներդրումների ծրագիր և կարող են ներդրումների վերաբերյալ որոշումներ կայացնել՝ հիմնվելով տարածաշրջանային ներդրումների ծրագրի վրա:

2. Հաղորդման համակարգի օպերատորները խթանում են գործնական միջոցառումներին՝ ապահովելու ցանցի օպտիմալ կառավարումը և խթանում էներգափոխանակման զարգացմանը, խտրականությունը բացառող շուկայական լուծումների միջոցով միջսահմանային կարողությունների համակարգված բաշխմանը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով կարճաժամկետ բաշխումների համար ենթադրվող աճուրդների հատուկ բնույթին և հավասարակշռության ու պահուստային հզորության մեխանիզմների ինտեգրմանը:

3. Սույն հոդվածի 1–ին և 2–րդ պարբերություններում նշված նպատակներին հասնելու համար յուրաքանչյուր տարածաշրջանային համագործակցության կառուցվածքի շրջանակում գտնվող աշխարհագրական տարածքը կարող է որոշվել Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով գոյություն ունեցող տարածաշրջանային համագործակցության կառուցվածքները: Յուրաքանչյուր անդամ պետության պետք է թույլատրվի համագործակցություն խթանել ավելի, քան մեկ աշխարհագրական տարածքում: Առաջին նախադասության մեջ նշված՝ լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 23(2)

հողվածում նշված՝ ուսումնասիրություն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Այդ նպատակով Հանձնաժողովը խորհրդակցում է Գործակալության և Էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի հետ:

Հոդված 13

Փոխադարձ հաղորդման համակարգի օպերատորների փոխհատուցման մեխանիզմ

1. Հաղորդման համակարգի օպերատորներին պետք է փոխհատուցեն այն ծախսերը, որոնք առաջացել են իրենց ցանցերում միջսահմանային հոսքերի առաջացման արդյունքում:

2. 1-ին պարբերությունում նշված փոխհատուցումը պետք է վճարվի միջսահմանային հոսքերի առաջացման և դադարեցման հաղորդման ազգային համակարգերի օպերատորների կողմից:

3. Փոխհատուցման գումարները սահմանվում են կանոնավոր հիմքով՝ հաշվի առնելով անցյալում որևէ կոնկրետ ժամանակահատված: Փոխհատուցման գումարների էքս-փոսթ (հետադարձ) ճշտումներն արվում են, անհրաժեշտության դեպքում, արտացոլելու փաստացի առաջացած ծախսերը:

Փոխհատուցման գումարների վճարման առաջին ժամանակահատվածը սահմանվում է 18-րդ հոդվածում նշված ուղեցույցներով:

4. Հանձնաժողովը սահմանում է վճարվող փոխհատուցման գումարների չափը: Լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցը պետք է ընդունվի 23(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

5. Ընդունած/առաջացած միջսահմանային հոսքի ծավալը և միջսահմանային հոսքի ծավալը, որը առաջանում և (կամ) դադարում է հաղորդման ազգային համակարգերում, սահմանվում է տվյալ ժամանակահատվածի ընթացքում փաստացի չափված էլեկտրաէներգիայի ֆիզիկական հոսքի հիման վրա:

6. Միջսահմանային հոսքեր ընդունելու արդյունքում առաջացած ծախսերը սահմանվում են երկարաժամկետ կտրվածքով կանխատեսելի միջին աճողական ծախսերի հիման վրա՝ հաշվի առնելով կորուստները, նոր ենթակառուցվածքներում արվող ներդրումներ, ու

գոյություն ունեցող ենթակառուցվածքների ծախսերի համապատասխան մասը, եթե այդ ենթակառուցվածքը օգտագործվում է միջսահմանային հոսքերի հաղորդման համար՝ մասնավորապես, հաշվի առնելով մատակարարման անվտանգությունն երաշխավորելու անհրաժեշտությունը: Առաջացած ծախսերը սահմանելիս օգտագործվում են ծախսերի հաշվարկման ընդունված ստանդարտ մեթոդաբանությունը: Միջսահմանային հոսքեր ընդունելու արդյունքում ցանցի ստացած օգուտը պետք է հաշվի առնվի ստացած փոխհատուցման գումարները կրճատելիս:

Հոդված 14

Ցանցերին միանալու համար սահմանված վճարները

1. Ցանցերին միանալու համար ցանցի օպերատորների կողմից կիրառվող վճարները պետք է լինեն թափանցիկ, հաշվի առնեն ցանցի անվտանգության անհրաժեշտությունը և արտացոլեն իրականում կատարված ծախսերն այնքանով, որքանով այդ ծախսերը համապատասխանում են արդյունավետ ու կառուցվածքայնորեն համեմատելի ցանցի օպերատորի կատարած ծախսերին և կիրառվում են ոչ խտրական եղանակով: Նշված վճարները չպետք է լինեն հեռավորությամբ պայմանավորված:

2. Անհրաժեշտության դեպքում, արտադրողների և (կամ) սպառողների նկատմամբ կիրառվող սակագների մակարդակը պետք է տա տեղակայման ազդանշաններ Համայնքի մակարդակով և հաշվի առնի ցանցի կորուստների քանակը և դրա արդյունքում առաջացած ցանցի գերբեռնվածությունը և ենթակառուցվածքներում արվող ներդրումների արդյունքում առաջացած ծախսերը:

3. Ցանցին միանալու համար վճարները սահմանելիս պետք է հաշվի առնվի հետևյալը.

ա) փոխադարձ հաղորդման համակարգի օպերատորների փոխհատուցման մեխանիզմի պատճառով առաջացած վճարումներն ու ստացած գումարները.

բ) փաստացի արված վճարումները և ստացած գումարները, ինչպես նաև անցյալի հիման վրա գնահատված՝ հետագայում սպասվող վճարումները:

4. Սույն հոդվածի համաձայն ցանցին միանալու համար վճարների սահմանումը չպետք է հակասի հայտարարագրված արտահանողների ու հայտարարագրված ներմուծողների

համար սահմանված վճարներին, որոնք առաջացել են 16-րդ հոդվածում նշված գերբեռնվածության կառավարման արդյունքում:

5. Էլեկտրաէներգիայի հայտարարագրված փոխանցումների առանձին գործարքների համար ցանցային հատուկ վճարներ չեն գանձվում:

Հոդված 15

Տեղեկությունների տրամադրումը

1. Հաղորդման համակարգի օպերատորները սահմանում են համակարգման ու տեղեկատվության փոխանակման մեխանիզմներ գերբեռնվածության դեպքում ցանցի անվտանգությունն ապահովելու համար:

2. Հաղորդման համակարգի օպերատորների կողմից կիրառվող անվտանգության, նախագծման և գործառնական ստանդարտները հրապարակվում են: Հրապարակված տեղեկություններն ընդգրկում են էլեկտրահաղորդման ընդհանուր կարողությունների հաշվարկման ընդհանուր սխեմա և հաղորդման հուսալիության մարժան՝ հիմնված ցանցի էլեկտրական ու ֆիզիկական հատկանիշների վրա: Այդ սխեմաները ենթակա են հաստատման ազգային կարգավորող մարմինների կողմից:

3. Հաղորդման համակարգի օպերատորները հրապարակում են յուրաքանչյուր օրվա համար նախատեսված էլեկտրահաղորդման առկա կարողությունների հաշվարկները՝ նշելով արդեն օգտագործվող էլեկտրահաղորդման առկա կարողությունները: Այդ տեղեկությունները հրապարակվում են որոշակի ընդմիջումներով փոխադրման օրվանից առաջ և, ցանկացած դեպքում, ներառում են գալիք շաբաթվա ու գալիք ամսվա կտրվածքով արված հաշվարկներ, ինչպես նաև քանակական նշում էլեկտրահաղորդման առկա կարողությունների հուսալիությունը:

4. Հաղորդման համակարգի օպերատորները հրապարակում են ընդհանուր առմամբ սպասվող ու փաստացի պահանջարկին, արտադրական ու գործարկման ակտիվների առկայությանն ու փաստացի օգտագործմանը, ցանցերի և էլեկտրահաղորդման գծերի առկայությանն ու օգտագործմանը և հավասարակշռության պահպանմանն ու օգտագործվող կարողություններին վերաբերող համապատասխան տվյալներ: Արտադրական ու գործարկման միավորների առկայությունն ու փաստացի օգտագործման համար կարող է օգտագործվել հաշվարկման ամփոփ տվյալներ:

5. Շուկայի համապատասխան մասնակիցները հաղորդման համակարգի օպերատորներին տրամադրում են համապատասխան տվյալներ:

6. Արտադրող ձեռնարկությունները, որոնք ունեն կամ աշխատեցնում են արտադրական ակտիվներ, որոնցից առնվազն մեկ արտադրական ակտիվն ունի առնվազն 250 ՄՎտ տեղակայված հզորություն, ազգային կարգավորող մարմին, ազգային մրցակցային մարմին ու Հանձնաժողովին մեկ ժամյա կտրվածքով յուրաքանչյուր կայանի մասով պետք է հինգ տարի շարունակ տրամադրեն տվյալներ, որոնք անհրաժեշտ են օպերատիվ կարգավարական որոշումներն ու էներգիայի բորսաներում, էլեկտրահաղորդման գծերի աճուրդներում, պահեստային շուկաներում և ոչ բորսայական շուկաներում գների առաջարկը ստուգելու համար: Յուրաքանչյուր կայանի մասով և մեկ ժամյա կտրվածքով հավաքվող տեղեկությունները պետք է ներառեն, սակայն չսահմանափակվեն առկա արտադրական կարողությունների և օգտագործված հնարավորությունների, այդ թվում՝ յուրաքանչյուր կայանում օգտագործված ռեսուրսների տեղաբաշխման մասին տվյալներով գնային առաջարկի իրականացման և արտադրական գործընթացի ընթացքում:

Հոդված 16

Գերբեռնվածության կառավարման ընդհանուր սկզբունքները

1. Ցանցի գերբեռնվածության խնդիրները պետք է կարգավորվեն ոչ խտրական շուկայական լուծումներով, որոնց միջոցով շուկայի մասնակիցներին ու հաղորդման համակարգի ներգրավված օպերատորներին տրվում են արդյունավետ տնտեսական ազդակներ: Նախընտրելի է, որ ցանցի գերբեռնվածության խնդիրները լուծվեն այնպիսի մեթոդներով, որոնց դեպքում չեն հիմնվում գործարքների վրա, այսինքն՝ մեթոդներ, որոնք չեն ներառում ընտրություն շուկայի առանձին մասնակիցների պայմանագրերի միջև:

2. Գործարքների կրճատման ընթացակարգերը պետք է օգտագործվեն արտակարգ իրավիճակներում, երբ հաղորդման համակարգի օպերատորը պետք է գործի արագ եղանակով և նման հանգամանքներում վերաառաքումը կամ ապրանքափոխանակությունը (բարտերը) անհնար է: Ցանկացած նմանատիպ ընթացակարգ պետք է կիրառվի ոչ խտրական եղանակով:

Ֆորս մաժորային դեպքերում շուկայի մասնակիցներին, որոնց արդեն հատկացրել են կարողությունների որոշակի մաս, պետք է փոխհատուցեն ցանկացած կրճատման համար:

3. Միջսահմանային հոսքերի վրա ազդող էլեկտրահաղորդման գծերի և (կամ) հաղորդման ցանցերի առավելագույն կարողությունները պետք է հասանելի լինեն շուկայի մասնակիցներին, որոնք համապատասխանում են ցանցի անվտանգ գործունեության անվտանգության ստանդարտներին:

4. Շուկայի մասնակիցները հաղորդման համակարգի համապատասխան օպերատորներին նախօրոք ողջամիտ ժամկետներում տեղեկացնում են, թե արդյոք իրենք մտադիր են օգտագործել իրենց հատկացրած կարողությունները: Ցանկացած հատկացրած կարողություն, որը չի օգտագործվել, պետք է օգտագործվի շուկայի օգտին բաց, թափանցիկ և ոչ խտրական եղանակով:

5. Հաղորդման համակարգի օպերատորները, որքան որ տեխնիկապես հնարավոր է, էլեկտրաէներգիայի ցանկացած հոսքի պահանջվող հզորությունը ցանցավորեն հակառակ ուղղությամբ էլեկտրահաղորդման միջհամակարգային գծով, որպեսզի այդ գիծն օգտագործեն իր առավելագույն հզորությամբ: Հաշվի առնելով ցանցի անվտանգությունը՝ երբեք չպետք է հրաժարվել այն գործարքներից, որոնք կթեթևացնեն ցանցի գերբեռնվածությունը:

6. էլեկտրահաղորդման գծերի տեղակայման արդյունքում ստացվող շահույթը պետք է օգտագործվի հետևյալ նպատակներով.

ա) երաշխավորելու հատկացրած կարողությունների փաստացի հասանելիությունն. և (կամ)

բ) ցանցում, մասնավորապես, էլեկտրահաղորդման գծերում ներդրումներ կատարելու միջոցով պահպանելու կամ ավելացնելու փոխկապակցման կարողությունները:

Եթե ստացված շահույթը չի կարող արդյունավետ կերպով օգտագործվել առաջին ենթապարբերության (ա) և (կամ) (բ) կետերով սահմանված նպատակների համար, այն, համապատասխան անդամ պետության կարգավորող մարմնի հաստատմամբ և այն առավելագույն չափով, որը որոշվում այդ կարգավորող մարմինների կողմից, կարող է օգտագործվել որպես եկամուտ, որը հաշվի է առնվում կարգավորող մարմինների կողմից ցանցի սակագները հաշվարկելու և (կամ) ֆիքսելու համար մեթոդաբանությունը հաստատելիս:

Ստացված շահույթի մնացած մասը փոխանցվում է առանձին ներքին հաշվի վրա, մինչև որ այն օգտագործվի առաջին ենթապարբերության (ա) և (կամ) (բ) կետերով սահմանված

նպատակների համար: Կարգավորող մարմինը Գործակալությանը տեղեկացնում է երկրորդ ենթապարբերությունում նշված հաստատման մասին:

Հոդված 17

Էլեկտրահաղորդման նոր գծեր

1. Սույն Կանոնակարգի 16(6) հոդվածի և 2009/72/ԵՀ հրահանգի և 9-րդ, 32-րդ հոդվածների ու 37(6) և (10) հոդվածի դրույթները, հարցման դեպքում, կարող են ժամանակավորապես չկիրառվել հաստատուն հոսանքի էլեկտրահաղորդման նոր գծերի նկատմամբ հետևյալ պայմաններում.

ա) ներդրումները պետք է մեծացնեն մրցակցությունը էլեկտրաէներգիայի մատակարարման ոլորտում.

բ) ներդրումների հետ կապված ռիսկերի մակարդակը այնքան բարձր է, որ ներդրումներ չեն կատարվի, մինչև ազատման շնորհումը.

գ) էլեկտրահաղորդման գիծը պետք է պատկանի ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ով, առնվազն իր իրավակազմակերպական ձևով, առանձին է այն համակարգի օպերատորներից, որոնց համակարգում պետք է կառուցվի էլեկտրահաղորդման այդ գիծը.

դ) էլեկտրահաղորդման այդ գծի օգտագործողներից գանձվում են վճարներ.

ե) «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 19-ի 96/92/ԵՀ հրահանգի [10] 19-րդ հոդվածում նշված առանձին շուկայի բացումից ի վեր կապիտալի կամ էլեկտրահաղորդման գծի շահագործման ծախսերի ոչ մի մաս չի ծածկվել էլեկտրահաղորդման գծով միացվող հաղորդման կամ բաշխման համակարգերից օգտվելու համար գանձվող վճարներից. և

զ) այդ ազատումը չպետք է վնասի էլեկտրաէներգիայի ներքին շուկայի մրցակցությանը կամ արդյունավետ գործունեությանը կամ այն կարգավորվող համակարգի արդյունավետ գործունեությանը, որին միացված է էլեկտրահաղորդման գիծը:

2. 1-ին պարբերությունը բացառիկ դեպքերում կիրառվում է նաև փոփոխական հոսանքի էլեկտրահաղորդման գծերը՝ պայմանով, որ տվյալ ներդրումների հետ կապված ծախսերն ու ռիսկերը առանձնակի մեծ են այն ծախսերի ու ռիսկերի համեմատ, որոնք սովորաբար

առաջանում են փոփոխական հոսանքի էլեկտրահաղորդման գծով հաղորդման երկու հարակից ազգային համակարգեր միացնելիս:

3. 1-ին պարբերությունը կարող է կիրառվել նաև էլեկտրահաղորդման գծերի առկա կարողություններն էապես ավելացնելու համար:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն ազատման մասին որոշումն ընդունվում է համապատասխան անդամ պետությունների կարգավորող մարմինների կողմից յուրաքանչյուր դեպքի համար առանձին: Ազատումը կարող է տարածվել էլեկտրահաղորդման նոր գծի կամ գոյություն ունեցող էլեկտրահաղորդման գծի ամբողջ հզորության կամ դրա մասի վրա:

Համապատասխան կարգավորող մարմիններից վերջինի կողմից ազատման հարցումը ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում Գործակալությունը նշված կարգավորող մարմիններին կարող է ներկայացնել խորհրդատվական եզրակացություն, որը կարող է հիմք հանդիսանալ իրենց որոշման համար:

Ազատում շնորհելու մասին որոշում կայացնելիս ուշադրություն պետք է դարձվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին պայմաններ սահմանել ազատման տևողության և էլեկտրահաղորդման գծի ոչ խտրական մուտքի վերաբերյալ: Նշված պայմանները սահմանելիս պետք է հաշվի առնել, մասնավորապես, լրացուցիչ կարողությունների կամ առկա կարողությունների փոփոխման հնարավորությունները, նախագծի ժամանակային շրջանակն ու ազգային հանգամանքները:

Ազատում շնորհելուց առաջ համապատասխան անդամ պետության կարգավորող մարմինները սահմանում են կանոններ և մեխանիզմներ կարողությունների կառավարման ու բաշխման վերաբերյալ: Գերբեռնվածության կառավարման կանոնները ներառում են չօգտագործված կարողությունները շուկային առաջարկելու պարտականություն, իսկ ցանցի օգտագործողներն իրավասու են պայմանագրով իրենց տրված կարողությունները վերավաճառել երկրորդային շուկայում: 1-ին պարբերության (ա), (բ) և (գ) կետերում նշված չափորոշիչները գնահատելիս հաշվի են առնվում կարողությունների բաշխման ընթացակարգի արդյունքները:

Եթե համապատասխան կարգավորող մարմինները ազատման վերաբերյալ որոշման շուրջ համաձայնության են գալիս վեց ամսվա ընթացքում, նրանք Գործակալությանը տեղեկացնում են այդ որոշման մասին:

Ազատման վերաբերյալ որոշումը, այդ թվում՝ սույն պարբերության երկրորդ ենթապարբերությունում նշված ցանկացած պայմաններ, պետք է պատշաճ ձևով հիմնավորվեն ու հրապարակվեն:

5. 4-րդ պարբերությունում նշված որոշումը ընդունվում է Գործակալության կողմից.

ա) բոլոր համապատասխան կարգավորող մարմինները համաձայնության չեն եկել վեց ամսվա ընթացքում այն օրվանից, երբ ազատման հարցումը ներկայացվել է այդ կարգավորող մարմիններից վերջինին. կամ

բ) համապատասխան կարգավորող մարմինների համատեղ պահանջով:

Մինչև նման որոշում ընդունելը Գործակալությունը խորհրդակցում է համապատասխան կարգավորող մարմինների և դիմողների հետ:

6. Չնայած 4-րդ և 5-րդ պարբերություններին՝ անդամ պետությունները պաշտոնական որոշում կայացնելու համար կարող են, կախված հանգամանքներից, կարգավորող մարմիններից կամ Գործակալությունից պահանջել անդամ պետության համապատասխան մարմին ներկայացնել իր եզրակացությունը ազատման հարցման վերաբերյալ: Եզրակացությունը հրապարակվում է որոշման հետ:

7. Ազատման յուրաքանչյուր հարցման պատճեն, ստացվելուն պես, կարգավորող մարմինների կողմից անհապաղ փոխանցվում է Գործակալությանն ու Հանձնաժողովին: Համապատասխան կարգավորող մարմինները կամ Գործակալությունը (ծանուցող մարմիններ) Հանձնաժողովին անհապաղ ծանուցում են ընդունված որոշման և դրան վերաբերող բոլոր համապատասխան տեղեկությունների մասին: Այդ տեղեկությունները կարող են ներկայացվել Հանձնաժողովին ամբողջական տեսքով՝ հնարավորություն տալով Հանձնաժողովին ընդունելու հիմնավորված որոշում: Տեղեկությունները, մասնավորապես, ներառում են.

ա) մանրամասն պատճառները, որոնց հիման վրա ազատումը շնորհվել կամ մերժվել է, այդ թվում՝ ազատման անհրաժեշտությունը հիմնավորող ֆինանսական տեղեկություններ.

բ) ազատման շնորհման արդյունքում էլեկտրաէներգիայի ներքին շուկայի մրցակցության ու արդյունավետ գործունեության վրա ազդեցության վերլուծությունը.

գ) էլեկտրահաղորդման գծի, որի համար շնորհվել է ազատումը, ազատման ժամանակահատվածի և ընդհանուր կարողությունների բաշխման պատճառները. և

դ) համապատասխան կարգավորող մարմինների հետ խորհրդակցության արդյունքները:

8. 7-րդ պարբերության համաձայն ծանուցում ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովը կարող է որոշել ծանուցող մարմիններից պահանջել փոփոխել կամ չեղյալ հայտարարել ազատում շնորհելու որոշումը: Այդ երկամսյա ժամանակահատվածը կարող է երկարաձգվել լրացուցիչ երկու ամսով, եթե Հանձնաժողովին անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ: Այդ լրացուցիչ ժամանակահատվածը սկսվում է ամբողջական տեղեկություններ ստանալուն հաջորդող օրը: Երկամսյա սկզբնական ժամանակահատվածը նույնպես կարող է երկարաձգվել Հանձնաժողովի և ծանուցող մարմինների փոխադարձ համաձայնությամբ:

Եթե պահանջվող տեղեկությունները չեն տրամադրվում հարցման մեջ սահմանված ժամանակահատվածի ընթացքում, ծանուցումը համարվում է չեղյալ հայտարարված, եթե այդ ժամկետը լրանալուն պես այն չի երկարաձգվել Հանձնաժողովի ու ծանուցող մարմինների փոխադարձ համաձայնությամբ կամ ծանուցող մարմինները պատշաճ հիմնավորված հայտարարագրով Հանձնաժողովին չեն տեղեկացրել այն մասին, որ իրենք ծանուցումը համարում են ամբողջական:

Ծանուցող մարմինները պետք է ենթարկվեն Հանձնաժողովի՝ ազատման մասին որոշումը մեկ ամսվա ընթացքում փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու որոշումը և համապատասխանաբար տեղեկացնեն Հանձնաժողովին:

Հանձնաժողովը պետք է պահպանի առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

Հանձնաժողովի կողմից ազատման մասին որոշման հաստատումը լրանում է դրա ընդունման օրվանից երկու տարի հետո, եթե այդ էլեկտրահաղորդման գծի կառուցումը դեռ չի սկսվել մինչև այդ օրը և դրա ընդունումից հինգ տարի հետո, եթե էլեկտրահաղորդման գիծը չի շահագործվել մինչև այդ օրը, եթե Հանձնաժողովը չորոշի, որ հետաձգման պատճառը էական խոչընդոտներ են, որոնք գտնվում են ազատում ստացած անձի հսկողությունից դուրս:

9. Հանձնաժողովը կարող է ընդունել ուղեցույցներ սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված պայմաններին կիրառման համար և սահմանել ընթացակարգ սույն հոդվածի 4-րդ, 7-րդ և 8-րդ պարբերությունների կիրառման համար: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 23(2)

հողվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 18

Ուղեցույցներ

1. Անհրաժեշտության դեպքում փոխադարձ հաղորդման համակարգի օպերատորների փոխհատուցման մեխանիզմին վերաբերող ուղեցույցներով, 13-րդ և 14-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների համաձայն, սահմանվում են.

ա) ընթացակարգի մանրամասները, որով սահմանվում է, թե հաղորդման համակարգի որ օպերատորներն են պարտավոր փոխհատուցման գումարներ վճարել միջսահմանային հոսքերի առաջացման համար, այդ թվում՝ 13(2) հոդվածի համաձայն միջսահմանային հոսքերի առաջացման հաղորդման ազգային համակարգի ու այդ հոսքերի դադարեցման համակարգի օպերատորների միջև բաժանումների արդյունքում առաջացած միջսահմանային հոսքերի համար.

բ) վճարման ընթացակարգի մանրամասները, այդ թվում՝ փոխհատուցման գումարների վճարման առաջին ժամանակահատվածի սահմանումը՝ 13(3) հոդվածի երկրորդ ենթապարբերության համաձայն.

գ) ընդունված միջսահմանային հոսքերի սահմանման մեթոդաբանության մանրամասները, որոնց համար, 13-րդ հոդվածի համաձայն, պետք է վճարվեն փոխհատուցման գումարներ՝ ելնելով հոսքերի թե՛ քանակից, թե՛ տեսակից, և այդ հոսքերի ծավալը, որը առաջանում և (կամ) դադարում է առանձին անդամ պետությունների հաղորդման համակարգերում՝ համաձայն 13(5) հոդվածի.

դ) միջսահմանային հոսքերի ընդունման արդյունքում առաջացած ծախսերի ու շահույթի սահմանման մեթոդաբանության մանրամասները՝ համաձայն 13(6) հոդվածի.

ե) Եվրոպական տնտեսական տարածքից դուրս գտնվող երկրներում առաջացող կամ դադարող էլեկտրաէներգիայի հոսքերի փոխադարձ հաղորդման համակարգի օպերատորների փոխհատուցման համակարգի ներսում վճարվող փոխհատուցման մանրամասները. և

զ) ազգային համակարգերի մասնակցությունը, որոնք փոխկապակցված են հաստատուն հոսանքի գծերով՝ համաձայն 13-րդ:

2. Ուղեցույցներով կարող են սահմանվել նաև համապատասխան կանոններ, որոնք կհանգեցնեն սակագների ազգային համակարգերի համաձայն արտադրողներից ու բաժանորդներից գանձվող վճարների սահմանման հիմնական սկզբունքների աստիճանական ներդաշնակեցմանը:

Ուղեցույցներով նախատեսվում է դրույթ Համայնքի մակարդակով համապատասխան և արդյունավետ ներդաշնակեցված տեղակայման ազդանշանների մասով:

Նման ներդաշնակեցումը չի խոչընդոտում անդամ պետություններին կիրառել մեխանիզմներ՝ ապահովելու, որ բաժանորդներից գանձվող վճարները համեմատելի լինեն իրենց ամբողջ տարածքով մեկ:

3. Անհրաժեշտության դեպքում սույն Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ներդաշնակեցման նվազագույն աստիճանը տրամադրող ուղեցույցներով նաև սահմանվում են.

ա) տեղեկությունների տրամադրմանը վերաբերող մանրամասներ՝ 15-րդ հոդվածով սահմանված սկզբունքների համաձայն.

բ) էլեկտրաէներգիայի վաճառքին վերաբերող կանոնների մանրամասները.

գ) էլեկտրահաղորդման գծի կարողությունների մասով ներդրումներ կատարելու խրախուսական կանոններ, այդ թվում՝ տեղակայման ազդանշաններ.

դ) 8(6) հոդվածում թվարկված ոլորտներին առնչվող մանրամասներ:

Այդ նպատակով Հանձնաժողովը խորհրդակցում է Գործակալության և էլեկտրաէներգիայի ՓՀՕԵՑ-ի հետ:

4. Ուղեցույցներ ազգային համակարգերի միջև հաղորդման առկա կարողությունների կառավարման ու բաշխման վերաբերյալ:

5. Հանձնաժողովը կարող է ընդունել նաև ուղեցույցներ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված խնդիրների/հարցերի վերաբերյալ: 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների համաձայն՝ այն կարող է փոփոխել սույն հոդվածի 4-րդ պարբերությունում նշված ուղեցույցները՝ մասնավորապես, ներառելու կարողությունների բաշխման մասով գործնականում կիրառվող բոլոր

մեթոդաբանություններին վերաբերող մանրամասն ուղեցույցներ և ապահովելու, որ գերբեռնվածության կառավարման մեխանիզմները զարգանան ներքին շուկայի խնդիրներին/նպատակներին համահունչ: Հարկ եղած դեպքում նման փոփոխություններ կատարելիս կարող են սահմանվել ընդհանուր կանոններ ցանցի օգտագործման/շահագործման ու գործունեության անվտանգության ու գործառնական նվազագույն ստանդարտներ, ինչպես նշված է 15(2) հոդվածում: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 23(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Ուղեցույցներ ընդունելիս կամ փոփոխելիս Հանձնաժողովը.

ա) ապահովում է, որ ուղեցույցներով տրամադրվի սույն Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ներդաշնակեցման նվազագույն աստիճան, և դրանք չգերազանցեն այդ նպատակների իրագործման համար անհրաժեշտ շրջանակը. և

բ) նշում է, թե ինչ գործողություններ է այն ձեռնարկել տվյալ ուղեցույցներով սահմանված կանոններին համապատասխանության ուղղությամբ երրորդ երկրներում, որոնք Համայնքի էլեկտրաէներգիայի համակարգի մի մասն են կազմում:

Սույն հոդվածի համաձայն առաջին անգամ ուղեցույցներ ընդունելիս Հանձնաժողովն ապահովում է, որ դրանք միանգամյա շրջաստեղմամբ ընդգրկեն առնվազն 1-ին պարբերության (ա) և (դ) կետերում և 2-րդ պարբերությունում նշված հարցերը:

Հոդված 19

Կարգավորող մարմինները

Կարգավորող մարմինները, իրենց պարտավորություններն կատարելիս, ապահովում են համապատասխանությունը սույն Կանոնակարգին ու 18-րդ հոդվածի համաձայն ընդունված ուղեցույցներին: Սույն Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար կարգավորող մարմինները, հարկ եղած դեպքում, համագործակցում են միմյանց, Հանձնաժողովի ու Գործակալության հետ՝ 2009/72/ԵՀ հրահանգի IX գլխի համաձայն:

Տեղեկությունների տրամադրումն ու գաղտնիությունը

1. Անդամ պետությունները և կարգավորող մարմինները պետք է, հարցման դեպքում, Հանձնաժողովին տրամադրեն 13-րդ հոդվածի նպատակներով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

Մասնավորապես, 13(4) և (6) հոդվածի նպատակներով՝ կարգավորող մարմինները կանոնավոր հիմքով տրամադրում են տեղեկություններ հաղորդման ազգային համակարգի օպերատորների կողմից փոխհատուցվող փաստացի ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև տվյալներ ու համապատասխան տեղեկություններ հաղորդման համակարգի օպերատորների ցանցում առաջացող ֆիզիկական հոսքերի և ցանցերի ծախսերի վերաբերյալ:

Հանձնաժողովը պետք է սահմանի ողջամիտ ժամկետներ, որի ընթացքում տեղեկությունները հնարավոր կլինի տրամադրել՝ հաշվի առնելով պահանջվող տեղեկությունների բարդությունն ու այդ տեղեկությունների անհրաժեշտության հրատապությունը:

2. Եթե համապատասխան անդամ պետությունը կամ կարգավորող մարմինը 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները չի տրամադրում սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն սահմանված վերջնաժամկետի ընթացքում, Հանձնաժողովը 13(4) և 18-րդ հոդվածի նպատակների համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները կարող է պահանջել անմիջապես համապատասխան ձեռնարկություններից:

Ձեռնարկությանը տեղեկություններ տրամադրելու հարցում ուղարկելիս Հանձնաժողովը խնդրանքի պատճեն միևնույն ժամանակ ուղարկում է այն անդամ պետության կարգավորող մարմիններին, որի տարածքում գտնվում է ձեռնարկության գլխավոր գրասենյակը:

3. 1-ին պարբերության համաձայն տեղեկությունների տրամադրման իր հարցման մեջ Հանձնաժողովը նշում է խնդրանքի իրավական հիմքը, տեղեկությունների տրամադրման վերջնաժամկետը, հարցման նպատակը և 22(2) հոդվածով նախատեսված տույժերը ոչ ճիշտ, ոչ ամբողջական կամ մոլորեցնող տեղեկություններ տրամադրելու համար: Հանձնաժողովը սահմանում է ողջամիտ վերջնաժամկետ՝ հաշվի առնելով պահանջվող տեղեկությունների բարդությունն ու հրատապությունը:

4. Ձեռնարկությունների սեփականատերերը կամ նրանց ներկայացուցիչները և, իրավաբանական անձանց դեպքում, այն անձինք, ովքեր օրենքով կամ հիմնադիր փաստաթղթով լիազորված են ներկայացնել նրանց, տրամադրում են պահանջվող տեղեկությունները: Եթե փաստաբանները պատշաճ կերպով լիազորված են տեղեկություններ տրամադրել իրենց վստահորդների անունից, վստահորդները պատասխանատվություն են կրում ոչ ճիշտ, ոչ ամբողջական կամ մոլորեցնող տեղեկությունների տրամադրման համար:

5. Եթե ձեռնարկությունը պահանջվող տեղեկությունները չի տրամադրում Հանձնաժողովի կողմից սահմանված վերջնաժամկետի ընթացքում կամ տրամադրում է ոչ ամբողջական տեղեկություններ, Հանձնաժողովը որոշմամբ կարող է պահանջել տրամադրել նշված տեղեկությունները: Որոշմամբ սահմանվում է, թե ինչ տեղեկություններ են պահանջվում և նշում է վերջնաժամկետը, որի ընթացքում դրանք պետք է տրամադրվեն: Որոշման մեջ նշվում են 22(2) հոդվածով նախատեսված տույժերը: Որոշման մեջ նշվում է նաև Եվրոպական համայնքների արդարադատության դատարանի կողմից այն վերանայվելու իրավունքը:

Հանձնաժողովը միևնույն ժամանակ ուղարկում է որոշման պատճեն այն անդամ պետության կարգավորող մարմիններին, որի տարածքում բնակվում է անձը կամ գտնվում է ձեռնարկության գլխավոր գրասենյակը:

6. 1–ին և 2–րդ պարբերություններում նշված տեղեկություններն օգտագործվում են միայն 13(4) և 18–րդ հոդվածի նպատակներով:

Հանձնաժողովը չի բացահայտում սույն Կանոնակարգի համաձայն ձեռք բերած տեղեկությունները, որոնց դեպքում գործում է մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորությունը:

Հոդված 21

Անդամ պետությունների՝ ավելի մանրամասն միջոցներ տրամադրելու իրավունքը

Սույն Կանոնակարգը չպետք է հակասի անդամ պետությունների՝ այնպիսի միջոցներ պահպանելու և ներկայացնելու իրավունքին, որոնք պարունակում են ավելի մանրամասն դրույթներ, քան ներկայացված են այստեղ կամ 18–րդ հոդվածում նշված ուղեցույցներում:

Հոդված 22

Տույժերը

1. Չհակասելով 2-րդ պարբերությանը՝ անդամ պետությունները սահմանում են սույն Կանոնակարգի խախտման դեպքում կիրառվող տույժերի կանոնները և ձեռնարկում այդ դրույթները կիրառելու համար անհրաժեշտ բոլոր քայլերը: Նախատեսված տույժերը պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Անդամ պետությունները, մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը, Հանձնաժողովին տեղեկացնում են թիվ 1228/2005 (ԵՀ) կանոնակարգի դրույթներին համապատասխանող կանոնների մասին և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին: Նրանք, մինչև 2011 թվականի մարտի 3-ը, Հանձնաժողովին տեղեկացնում են թիվ 1228/2005 (ԵՀ) կանոնակարգի դրույթներին չհամապատասխանող կանոնների մասին և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:

2. Հանձնաժողովը կարող է որոշմամբ ձեռնարկություններին նշանակել տուգանքներ, որոնք չեն գերազանցում նախորդ ֆինանսական տարվա ընդհանուր շրջանառության 1 տոկոսը, եթե նրանք միտումնավոր կերպով կամ անփութորեն տրամադրում են ոչ ճիշտ, ոչ ամբողջական կամ շփոթեցնող տեղեկություններ 20(3) հոդվածի համաձայն ընդունված որոշմամբ ներկայացված հարցման դեպքում կամ պահանջվող ժամկետներում տեղեկություններ չեն տրամադրում 20(5) հոդվածի առաջին ենթապարբերության համաձայն ընդունված որոշմամբ ներկայացված պահանջի դեպքում:

Տուգանքի չափը որոշելիս/սահմանելիս Հանձնաժողովը հաշվի է առնում խախտման ծանրությունը՝ առաջին ենթապարբերության պահանջներին համապատասխան:

3. 1-ին պարբերության համաձայն նախատեսված տույժերը չեն կարող լինել քրեական իրավունքի բնույթի:

Հոդված 23

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է 2009/72/ԵՀ հրահանգի 46-րդ հոդվածով ստեղծված Կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 24

Հանձնաժողովի հաշվետվությունը

Հանձնաժողովը դիտանցում է սույն Կանոնակարգի իրականացումը: 2009/72/ԵՀ հրահանգի 47(6) հոդվածում նշված իր հաշվետվության մեջ Հանձնաժողովը պետք է հայտնի սույն Կանոնակարգի կիրառման ժամանակ ձեռք բերած իր փորձի մասին: Մասնավորապես, հաշվետվությունը պետք է ուսումնասիրի, թե ինչ չափով է սույն Կանոնակարգը հաջողության հասել էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակման ցանցին միանալու համար խտրականությունը բացառող և ծախսերն արտահայտող պայմաններ ապահովելու գործում՝ լավ գործող ներքին շուկայում բաժանորդի ընտրությանը և մատակարարման երկարաժամկետ անվտանգությանը նպաստելու, ինչպես նաև տեղակայման ազդանշանների առկայության չափը որոշելու նպատակով: Հարկ եղած դեպքում, հաշվետվությանը կցվում են համապատասխան առաջարկներ և (կամ) առաջարկություններ:

Հոդված 25

Ուժը կորցրած ճանաչելը

2003 թվականի մարտի 3-ից թիվ 1228/2005 (ԵՀ) կանոնակարգը ճանաչվում է ուժը կորցրած: Ուժը կորցրած կանոնակարգին արված հղումները պետք է դիտվեն որպես սույն Կանոնակարգին արված հղումներ և պետք է կարդացվեն հավելված II-ում սահմանված հարաբերակցության աղյուսակի համաձայն:

Հոդված 26

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո՝ 20-րդ օրը:

Այն կիրառվում է 2011 թվականի մարտի 3-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի հուլիսի 13-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ՝

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Է. Էռլանդսոն

[1] ՊՏ C 211, 19.08.2008թ., էջ 23:

[2] ՊՏ C 172, 05.07.2008թ., էջ 55:

[3] Եվրոպական պառլամենտի 2008 թվականի հունիսի 18-ի եզրակացություն (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում), Խորհրդի 2009 թվականի հունվարի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 75 E, 24.03.2009թ., էջ 16) և Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 22-ի դիրքորոշում (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում): Խորհրդի 2009 թվականի հունիսի 25-ի որոշում:

[4] ՊՏ թիվ L 176, 15.07.2003թ., էջ 37:

[5] ՊՏ թիվ L 176, 15.07.2003թ., էջ 1:

[6] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

[7] ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[8] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 55-ին էջը:

[9] ՊՏ L 262, 22.09.2006 թ., էջ 1:

[10] ՊՏ L 27, 30.01.1997 թ., էջ 20:

**ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԵՎ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՌԿԱ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հաղորդման համակարգի օպերատորներն (ՀՀՕները) աշխատում են ընդունել բոլոր առևտրային գործարքները, այդ թվում՝ միջսահմանային առևտուր ներառող առևտրային գործարքները:

1.2. Եթե գերբեռնվածություն չկա, փոխկապակցվածության ցանցի մուտքը պետք է անսահմանափակ լինի: Այդ դեպքում անհրաժեշտություն չկա սահմանել ընդհանուր և մշտապես գործող ընթացակարգ միջսահմանային հաղորդման ծառայությանը միանալու համար:

1.3. Եթե ծրագրված առևտրային գործարքները համատեղելի չեն ցանցի անվտանգ գործունեության հետ, ՀՀՕները թեթևացնում են գերբեռնվածությունը ցանցի գործունեության անվտանգության պահանջներին համապատասխան՝ միևնույն ժամանակ աշխատելով ապահովել, որ հարակից ծախսերը մնան տնտեսական տեսանկյունից արդյունավետ մակարդակում: Եթե չեն կարող կիրառվել ցածր գներ, ապա նախատեսվում է թերությունների շտկման նպատակով վերաառաքում կամ ապրանքափոխանակություն (բարտեր):

1.4. Կառուցվածքային գերբեռնվածության դեպքում ՀՀՕների կողմից անմիջապես կիրառվում են նախապես որոշված ու համաձայնեցված՝ գերբեռնվածության կառավարման համապատասխան մեթոդներ ու միջոցներ: Գերբեռնվածության կառավարման մեթոդներն ապահովում են, որ հաղորդման հատկացված կարողությունների հետ կապված ֆիզիկական հոսքերը համապատասխանեն ցանցային անվտանգության ստանդարտներին:

1.5. Գերբեռնվածության կառավարման համար ընդունված մեթոդները տնտեսական արդյունավետ ազդակներ են հաղորդում շուկայի մասնակիցներին կամ ՀՀՕերին, նպաստում մրցակցությանը և հարմար են տարածաշրջանային ու Համայնքի մասշտաբով օգտագործման համար:

1.6. Գերբեռնվածության կառավարման դեպքում չեն օգտագործվում այնպիսի մեթոդներ, որոնք հիմնված են գործարքների վրա: Հաղորդման վերաբերյալ հարցումը մերժվում է միայն այն դեպքում, երբ բավարարված են հետևյալ համահավաք պայմանները.

ա) նշված հարցման ընդունման արդյունքում առաջացող աճող ֆիզիկական հոսքերը ենթադրում են, որ այլևս չի կարող է երաշխավորվել էներգահամակարգերի անվտանգ գործունեությունը, և

բ) գերբեռնվածության կառավարման ընթացակարգի դեպքում հարցման դրամական արժեքն ավելի ցածր է, քան նույն ծառայության կամ պայմանների համար նախատեսված այլ հարցումների դրամական արժեքը:

1.7. Եթե սահմանվում են ցանցային համապատասխան տարածքները, որոնցում կամ որոնց միջև պետք է կիրառվի գերբեռնվածության կառավարումը, ՀՀՕները առաջնորդվում են ծախսերի արդյունավետության և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի վրա բացասական ազդեցությունների նվազեցման սկզբունքներով: Մասնավորապես, ՀՀՕները չեն սահմանափակում փոխկապակցման կարողությունները իրենց հսկման տարածքի ներսում գերբեռնվածության խնդիրը լուծելու նպատակով, բացառությամբ՝ վերոհիշյալ և գործունեության անվտանգության [1] պատճառներից ելնելով: Այդ դեպքում ՀՀՕները համակարգի բոլոր օգտագործողներին նկարագրում և թափանցիկ կերպով ներկայացնում են իրավիճակը: Նման իրավիճակ կարող է տիրել միայն մինչև երկարաժամկետ լուծում գտնելը: ՀՀՕները համակարգի բոլոր օգտագործողներին նկարագրում և թափանցիկ կերպով ներկայացնում են երկարաժամկետ լուծում գտնելու մեթոդաբանությունն ու ծրագրերը:

1.8. Հսկման տարածքի ներսում գործառնական միջոցներով և վերաառաքման միջոցով ցանցի հավասարակշռությունը պահելիս ՀՀՕը հաշվի է առնում այդ միջոցների ազդեցությունը հսկման հարևան տարածքների վրա:

1.9. Մինչև 2008 թվականի հունվարի 1-ը օրվա ընթացքում էլեկտրահաղորդման գծի հզորության/կարողությունների գերբեռնվածության կառավարման մեխանիզմները սահմանվում են համաձայնեցված եղանակով՝ առևտրի հնարավորությունները մեծացնելու ու միջսահմանային հավասարակշռություն ապահովելու նպատակով:

1.10. Ազգային կարգավորող մարմինները պարբերաբար գնահատում են գերբեռնվածության կառավարման մեթոդները՝ հատուկ ուշադրություն դարձնելով համապատասխանությանը սույն Կանոնակարգով և նշված ուղեցույցներով սահմանված սկզբունքներին ու կանոններին և այդ սկզբունքների ու կանոնների համաձայն հենց կարգավորող մարմինների կողմից սահմանված ժամկետներին ու պայմաններին: Այդ

զնահատումը ներառում է շուկայի բոլոր մասնակիցների խորհրդատվությունն ու մասնագիտացված դասընթացներ:

2. Գերբեռնվածության կառավարման մեթոդներ

2.1. Գերբեռնվածության կառավարման մեթոդները պետք է հիմնվեն շուկայի վրա՝ արդյունավետ միջսահմանային առևտուրը հեշտացնելու նպատակով: Այդ նպատակով կարողությունները պետք է բաշխվեն միայն բացահայտ (կարողություն) կամ ենթադրվող (կարողություն) աճուրդների միջոցով: Երկու մեթոդներն էլ կարող են համատեղ կիրառվել միևնույն էլեկտրահաղորդման գծի դեպքում: Օրվա ընթացքում կարող է կիրառվել անընդհատ/շարունակական առևտուր:

2.2. Կախված մրցակցության պայմաններից՝ գերբեռնվածության կառավարման մեխանիզմները պետք է ունենան երկարաժամկետ ու կարճաժամկետ հաղորդման կարողությունների բաշխման հնարավորություն:

2.3. Կարողությունների բաշխման յուրաքանչյուր ընթացակարգ բաշխում է փոխկապակցման առկա կարողությունների սահմանված մասը, դեռ չօգտագործված կարողությունները և էլեկտրահաղորդման սեփականատերերի կողմից նախկին բաշխումներից ազատված ցանկացած կարողություն:

2.4. ՀՀՕները օպտիմալացնում են կարողությունների հաստատունության մակարդակը՝ հաշվի առնելով ներգրավված ՀՀՕների պարտականություններն ու իրավունքները, շուկայի մասնակիցների պարտականություններն ու իրավունքները՝ արդյունավետ մրցակցություն խթանելու նպատակով: Կարողությունների մի մասը կարող է շուկայում առաջարկվել հաստատունության ավելի վաղ մակարդակով, սակայն, այնուամենայնիվ, շուկայի մասնակիցները պետք է մշտապես տեղեկացված լինեն միջսահմանային գծերով փոխադրումների հստակ պայմանների մասին:

2.5. Երկարաժամկետ ու միջնաժամկետ բաշխումներից օգտվելու իրավունքը հաղորդման հաստատուն կարողությունների իրավունք/առավելություն է: Նշանակման պահին դրանք ենթակա են «օգտագործել կամ կորցնել» կամ «օգտագործել կամ վաճառել» սկզբունքներին:

2.6. ՀՀՕները սահմանում են տարբեր ժամկետներում կարողությունների բաշխման համապատասխան կառուցվածք: Կառուցվածքը կարող է ներառել օրական կամ օրվա ընթացքում փոխկապակցման կարողությունների բաշխման նվազագույն քանակ պահպանելու տարբերակ: Բաշխման նշված կառուցվածքը վերանայվում է համապատասխան

կարգավորող մարմինների կողմից: ՀՀՕները իրենց առաջարկները մշակելիս հաշվի են առնում.

ա) շուկաների առանձնահատկությունները.

բ) գործառնական պայմանները, օր.՝ հստակ սահմանված ժամանակացույցների զուտացման հետևանքները.

գ) կարողությունների բաշխման առկա մեխանիզմների համար ընդունված տոկոսային հարաբերության ու ժամկետի ներդաշնակեցման մակարդակը:

2.7. Կարողությունների բաշխման ընթացքում խտրականություն չպետք է դրվի շուկայի մասնակիցների միջև, որոնք ցանկանում են օգտվել մատակարարման երկկողմ պայմանագրերն օգտագործելու կամ էներգիայի բորսաներում գներ առաջարկելու իրենց իրավունքից: Առաջարկվող ամենաբարձր գները, լինեն դրանք ուղղակի կամ անուղղակի տվյալ ժամկետի ընթացքում, պետք է արդյունավետ լինեն:

2.8. Այն տարածաշրջաններում, որտեղ էլեկտրաէներգիայի առաջնային ֆինանսական շուկաները լավ զարգացած են և արդեն ապացուցել են իրենց արդյունավետությունը, փոխկապակցման կարողությունները կարող են բաշխվել ենթադրվող աճուրդների միջոցով:

2.9. Բացառությամբ էլեկտրահաղորդման նոր գծերի, որոնց վրա տարածվում է թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգի 7-րդ հոդվածի կամ սույն Կանոնակարգի 17-րդ հոդվածի համաձայն ընդունված ազատումը, արգելվում են սահմանել գներ չօգտագործված կարողությունների բաշխման մեթոդների համար:

2.10. Որպես կանոն, շուկայի բոլոր պոտենցիալ մասնակիցները առանց սահմանափակման պետք է հնարավորություն ունենան մասնակցել կարողությունների բաշխման գործընթացին: Շուկայի ցանկացած դերակատարի գերիշխող դիրքից պոտենցիալ օգտագործման հետ կապված խնդիրներից կամ դրանց սրումից խուսափելու նպատակով կարգավորող մարմինները և (կամ) մրցակցության հարցերով մարմինները, հարկ եղած դեպքում, կարող են սահմանափակումներ սահմանել բոլոր կամ առանձին ընկերությունների նկատմամբ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնելու հետևանքով:

2.11. Շուկայի մասնակիցները ՀՀՕներին պետք է հստակ կերպով ներկայացնեն յուրաքանչյուր ժամկետի համար սահմանված վերջնաժամկետով իրենց կողմից օգտագործված կարողությունները: Այդ վերջնաժամկետը պետք է հնարավորություն տա

ՀՀՕներին վերաբաշխել չօգտագործված կարողությունները հաջորդ համապատասխան ժամկետի, այդ թվում՝ օրական կտրվածքով/օրվա ընթացքում օգտագործման համար:

2.12. Կարողությունները պետք է ազատ վաճառվեն երկրորդային հիմքով՝ պայմանով, որ ՀՀՕ-ն նախօրոք տեղեկացվի այդ մասին: Եթե ՀՀՕ-ն մերժում է երկրորդային վաճառքը (գործարքը), նա պետք է այդ մասին հստակ ու թափանցիկ ձևով հաղորդի և բացատրի շուկայի բոլոր մասնակիցներին և այդ մասին ծանուցի կարգավորող մարմիններին:

2.13. Կարողությունների բաշխման հետ կապված պարտականությունները չկատարելու արդյունքում առաջացած ֆինանսական հետևանքները վերագրում են նրանց, ովքեր պատասխանատու են պարտականությունների չկատարման համար: Եթե շուկայի մասնակիցները չեն օգտագործում այն կարողությունները, որոնք իրենք նախատեսել էին օգտագործել, կամ, ենթադրվող աճուրդի միջոցով ձեռք բերած կարողությունների դեպքում, երկրորդային հիմքով չվաճառելու կամ կարողությունները պատշաճ ժամանակին չվերադարձնելու դեպքում նրանք գրկվում են այդ կարողությունների նկատմամբ ունեցած իրենց իրավունքներից և վճարում ծախսերն արտացոլող վճար: Կարողությունները չօգտագործելու համար վճարվող ծախսերն արտացոլող վճարները պետք է լինեն հիմնավորված ու համաչափ: Նմանապես, եթե ՀՀՕ-ն չի կատարում իր պարտականությունները, շուկային մասնակցին պետք է փոխհատուցեն կարողությունների նկատմամբ իր իրավունքները կորցնելու համար: Այդ նպատակով դրանից բխող կորուստները հաշվի չեն առնվում: Պարտականությունները չկատարելու հետևանքով առաջացած պարտավորությունների սահմանման՝ ֆինանսական հետևանքների մասով հիմնական հասկացություններն ու մեթոդները սահմանվում են նախօրոք և վերանայվում ազգային համապատասխան կարգավորող մարմնի կամ մարմինների կողմից:

3. Համաձայնեցում

3.1. Էլեկտրահաղորդման գծի կարողությունների բաշխումը պետք է լինի համաձայնեցված ու ներգրավված ՀՀՕների կողմից իրականացվի բաշխման ընդհանուր ընթացակարգերին համապատասխան: Այնպիսի դեպքերում, երբ երկու երկրների (ՀՀՕների) միջև առևտրային փոխանակումները հավանաբար էական ազդեցություն կունենան ցանկացած երրորդ երկրում (ՀՀՕ) ֆիզիկական հոսքի վրա, գերբեռնվածության կառավարման մեթոդները պետք է համաձայնեցվեն գերբեռնվածության կառավարման ընդհանուր ընթացակարգի ազդեցությանը ենթարկվող բոլոր ՀՀՕների միջև: Ազգային կարգավորող մարմինները և ՀՀՕներն ապահովում են, որ այլ ցանցերում էլեկտրաէներգիայի ֆիզիկական հոսքերի վրա

էական ազդեցություն ունեցող գերբեռնվածության կառավարման ընթացակարգը մշակվի միակողմանի կերպով:

3.2. Շուկայում կարողությունների բաշխման մասով գերբեռնվածության կառավարման ընդհանուր համաձայնեցված մեթոդն ու ընթացակարգը պետք է առնվազն տարեկան, ամսեկան և օրական կտրվածքով մինչև 2007 թվականի հունվարի 1-ը կիրառվի երկրների միջև հետևյալ տարածաշրջաններում.

ա) Հյուսիսային Եվրոպայում (այսինքն՝ Դանիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում ու Լեհաստանում),

բ) Հյուսիս-Արևմտյան Եվրոպայում (այսինքն՝ Բենիլյուքսում, Գերմանիայում և Ֆրանսիայում),

գ) Իտալիայում (այսինքն՝ Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Սլովենիայում և Հունաստանում),

դ) Կենտրոնական Արևելյան Եվրոպայում (այսինքն՝ Գերմանիայում, Լեհաստանում, Չեխիայի Հանրապետությունում, Սլովակիայում, Հունգարիայում, Ավստրիայում և Սլովենիայում),

ե) Հարավ-Արևմտյան Եվրոպայում (այսինքն՝ Իսպանիայում, Պորտուգալիայում և Ֆրանսիայում),

զ) Միացյալ Թագավորությունում, Իռլանդիայում և Ֆրանսիայում,

է) Բալթյան պետություններում (այսինքն՝ Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում):

Ավելի քան մեկ տարածաշրջանին պատկանող՝ փոխկապակցման համակարգեր ներառող երկրներում կիրառվող գերբեռնվածության կառավարման մեթոդը կարող է տարբեր լինել՝ ապահովելու այլ տարածքներում (որոնց պատկանում են այդ երկրները) կիրառվող մեթոդների հետ համեմատելիությունը: Այդ դեպքում համապատասխան ՀՀՕներն առաջարկում են այնպիսի մեթոդ, որը վերանայվում է համապատասխան կարգավորող մարմինների կողմից:

3.3. 2.8 կետում նշված տարածաշրջանները կարող են բաշխել փոխկապակցման կարողությունները նախօրոք բաշխման մեթոդով:

3.4. Գերբեռնվածության կառավարման համատեղելի ընթացակարգերը նշված յոթ տարածաշրջաններում սահմանվում են՝ էլեկտրաէներգիայի իսկապես ինտեգրված ներքին

շուկա ձևավորելու նպատակով: Շուկայի մասնակիցները չպետք է բախվեն տարածաշրջանային անհամատեղելի համակարգերի հետ:

3.5. Արդար ու արդյունավետ մրցակցություն և միջսահմանային առևտուր խթանելու նպատակով՝ 3.2. կետում նշված տարածաշրջանների ՀՀՕների միջև համակարգումը պետք է ներառի կարողությունների հաշվարկման ու բաշխման օպտիմալացման բոլոր քայլերը և պատասխանատու անձանց հստակ մատնանշումներ՝ ապահովելու ցանցի գործունեությունը Այդ համակարգումը, մասնավորապես, ներառում է.

ա) հաղորդման ընդհանուր մոդելի օգտագործումը, որն արդյունավետ կերպով առնչվում է փոխադարձ կախվածության մեջ գտնվող հոսքերի հետ և որը հաշվի է առնում ֆիզիկական ու առևտրային հոսքերի միջև եղած հակասությունները,

բ) կարողությունների բաշխում ու նշանակում՝ փոխադարձ կախվածության մեջ գտնվող հոսքերի հետ արդյունավետ կերպով առնչվելու նպատակով,

գ) էլեկտրահաղորդման գծերի սեփականատերերին վերապահված նույնանման պարտականություններ տեղեկություններ տրամադրել կարողություններն օգտագործելու իրենց մտադրության մասին, այսինքն՝ կարողությունների նշանակում (բացահայտ աճուրդների համար),

դ) նույնանման ժամկետներ ու վերջնաժամկետներ,

ե) տարբեր ժամկետներում կարողությունների բաշխման (օրինակ՝ մեկ օր, երեք ժամ, մեկ շաբաթ և այլն) և վաճառված կարողությունների նույնանման կառուցվածք (հզորությունը ՄՎտով, ՄՎտ/ժամով),

զ) հաստատուն պայմանագրեր շուկայի մասնակիցների հետ,

է) հոսքերի համապատասխանության ստուգումը ցանցի անվտանգ գործունեության պահանջներին գործառնական/օպերատիվ պլանավորման և իրական գործունեության համար,

ը) գերբեռնվածության կառավարման գործողությունների հաշվառում ու սահմանում:

3.6. Համաձայնեցումը ներառում է նաև տեղեկատվության փոխանակում ՀՀՕների միջև: Տեղեկատվության փոխանակման բնույթը, ժամանակն ու հաճախականությունը պետք է համատեղելի լինի 3.5 կետով սահմանված գործողությունների և էլեկտրաէներգիայի շուկաների գործունեության հետ: Տեղեկատվության փոխանակումը պետք է,

մասնավորապես, հնարավորություն տա ՀՀՕներին հնարավորինս լավ պատկերացում կազմել ցանցի ընդհանուր վիճակի մասին՝ իրենց ցանցերում հոսքերը ու փոխկապակցման առկա կարողությունները գնահատելու նպատակով: Այլ ՀՀՕների անունից տեղեկություններ հավաքող ցանկացած ՀՀՕ մասնակցող ՀՀՕ-ին ներկայացնում է հավաքած տեղեկությունների արդյունքները:

4. Շուկայական գործառնությունների ժամանակացույցը

4.1. Հաղորդման առկա կարողությունները բաշխվում են նախօրոք: Յուրաքանչյուր անգամ կարողությունները բաշխելուց առաջ ներգրավված ՀՀՕները համատեղ հրապարակում են բաշխվող կարողությունների ցանկը՝ հարկ եղած դեպքում հաշվի առնելով արդեն օգտագործված կարողություններ, արդեն նշանակված կարողությունները, ինչպես նաև այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում ազատ կարողությունները կկրճատվեն կամ չեն լինի (օրինակ՝ պահպանման նպատակով):

4.2. Լիովին հաշվի առնելով ցանցի անվտանգությունը՝ հաղորդման բաշխումը/նշանակումը տեղի է ունենում նախօրոք, մինչև բոլոր համապատասխան կազմակերպված շուկաներում աշխատանքային օրվա սկիզբը և մեկ օր առաջ կամ օրվա ընթացքում բաշխման մեխանիզմների համաձայն բաշխվող կարողությունների ցանկի հրապարակումը: Հակառակ ուղղությամբ հաղորդման նշանակումները զուտացվում են՝ էլեկտրահաղորդման գիծն առավել արդյունավետ կերպով օգտագործելու նպատակով:

4.3. D օրվա համար հաղորդման առկա կարողությունների բաշխումը օրվա ընթացքում տեղի է ունենում D-1 և D օրերին նշված կամ մեկ օր առաջ կատարած սպասարկման աշխատանքներից հետո:

4.4. Ցանցի հաջորդ օրվա գործունությունը նախապատրաստելիս ՀՀՕները հարևան ՀՀՕների հետ փոխանակում են տեղեկություններ, այդ թվում՝ ցանցի կանխատեսման իրենց տոպոլոգիայի, էլեկտրաէներգիայի գեներատորների հնարավոր ու նախատեսված արտադրության և հոսքերի վերաբերյալ, գործառնական մեթոդներով և ցանցի անվտանգ գործունեության կանոններին համապատասխան ընդհանուր ցանցի օգտագործումն օպտիմալացնելու նպատակով:

5. Թափանցիկությունը

5.1. ՀՀՕներին հրապարակում են ցանցում առկա կարողությունների, ցանցին միանալու և ցանցից օգտվելու վերաբերյալ բոլոր համապատասխան տվյալները, այդ թվում՝

հաշվետվություն այն մասին, թե որտեղ և ինչու է առաջացել գերբեռնվածություն, գերբեռնվածության կառավարման համար կիրառվող մեթոդները և դրա հետագա կառավարման պլանները:

5.2. ՀՀՕները հրապարակում են տարբեր հանգամանքներում շուկայում առկա կարողությունները ավելացնելու նպատակով կիրառվող գերբեռնվածության կառավարման մեթոդի ընդհանուր նկարագրությունը և տարբեր ժամկետներում փոխկապակցման կարողությունների հաշվարկման ընդհանուր սխեման՝ հիմնված ցանցի էլեկտրական ու ֆիզիկական հատկանիշների վրա: Նշված սխեման վերանայվում է համապատասխան անդամ պետությունների կարգավորող մարմինների կողմից:

5.3. Գերբեռնվածության կառավարման և կարողությունների բաշխման կիրառվող ընթացակարգերը, կարողություններն օգտագործելու ժամանակահատվածի ու ընթացակարգերի հետ միասին, առաջարկվող արտադրանքների նկարագրությունն ու ՀՀՕների և կարողությունները տնօրինող կողմի պարտականություններն ու իրավունքները, այդ թվում՝ պարտականությունները չկատարելու հետևանքով առաջացած պարտավորությունները, մանրամասն նկարագրվում ու թափանցիկ ձևով մատչելի են դարձվում ցանցի բոլոր պոտենցիալ օգտագործողների ՀՀՕների կողմից:

5.4. Անվտանգության, աշխատանքային և նախագծման ստանդարտները կազմում են բաց ու հանրային փաստաթղթում ՀՀՕների կողմից հրապարակվող տեղեկությունների անբաժանելի մասը: Այդ փաստաթուղթը նույնպես վերանայվում է ազգային կարգավորող մարմինների կողմից:

5.5. ՀՀՕները հրապարակում են միջսահմանային առևտրին վերաբերող և հնարավոր կանխատեսումների հիման վրա բոլոր համապատասխան տվյալները: Այդ պարտականությունը կատարելու համար շուկայի համապատասխան մասնակիցները ՀՀՕներին տրամադրում են համապատասխան տվյալները: Եղանակը, որով հրապարակվում են նշված տեղեկությունները վերանայվում են կարգավորող մարմինների կողմից: ՀՀՕները հրապարակում են առնվազն.

ա) տարեկան կտրվածքով. տեղեկություններ հաղորդման ենթակառուցվածքի երկարաժամկետ զարգացման և միջսահմանային հաղորդման կարողության վրա դրա ազդեցության վերաբերյալ.

բ) ամսեկան կտրվածքով. շուկայում առկա հաղորդման կարողությունների մասին առնվազն մեկ ամիս կամ մեկ տարի առաջ արված կանխատեսումներ՝ հաշվի առնելով

կանխատեսումների հաշվարկման պահին ՀՀՕներին հասանելի բոլոր համապատասխան տեղեկությունները (օրինակ՝ ամռան և ձմռան ազդեցությունը էլեկտրահաղորդման գծերի կարողությունների, ցանցի սպասարկման, արտադրվող միավորների հասանելիության վրա և այլն)։

գ) շաբաթական կտրվածքով. շուկայում հաղորդման առկա կարողությունների մասին առնվազն մեկ շաբաթ առաջ արված կանխատեսումներ՝ հաշվի առնելով կանխատեսումների հաշվարկման պահին ՀՀՕներին հասանելի բոլոր համապատասխան տեղեկությունները, ինչպիսիք են եղանակի տեսությունը, ցանցի սպասարկման պլանավորված աշխատանքը, արտադրվող միավորների հասանելիությունը և այլն։

դ) օրական կտրվածքով. յուրաքանչյուր ժամանակային միավորի ընթացքում շուկայում առկա հաղորդման կարողությունների մասին առնվազն մեկ օր առաջ կամ օրվա ընթացքում արված կանխատեսումներ՝ հաշվի առնելով հաղորդման կարողությունների՝ մեկ օր առաջ արված բոլոր նշանակումները, արտադրության՝ մեկ օր առաջ կազմած ժամանակացույցը, առաջարկի կանխատեսումները և ցանցի սպասարկման պլանավորված աշխատանքը։

ե) արդեն բաշխված ընդհանուր կարողությունները և այն պայմանները, որոնց դեպքում կարողությունները կարող են օգտագործվել (օրինակ՝ աճուրդային գինը, պարտականություններ կարողությունների օգտագործման մասով և այլն)՝ չօգտագործված կարողությունները որոշելու նպատակով։

զ) բաշխված կարողությունները, ինչպես նաև վճարված գները բաշխումից հետո հնարավորինս շուտ։

է) անմիջապես նշանակումից հետո օգտագործված կարողությունները։

ը) հնարավորինս մոտ իրական ժամանակին. առևտրային և ֆիզիկական ընդհանուր հոսքերը, այդ թվում՝ ՀՀՕների կողմից ձեռնարկված ուղղիչ գործողությունների արդյունքների նկարագրությունը (օր.՝ կրճատում) ցանցի կամ համակարգի խնդիրները լուծելու նպատակով։

թ) կանխատեսելի տեղեկություններ էլեկտրաէներգիայի հաղորդման պլանավորված ընդմիջումների վերաբերյալ և նախորդ օրվա կտրվածքով փաստացի տեղեկություններ 100 ՄՎտ–ից ավելի էլեկտրական հզորություն ունեցող գեներատորների պլանավորված ու չպլանավորված ընդմիջումների վերաբերյալ։

5.6. Բոլոր համապատասխան տեղեկությունները պետք է հասանելի լինեն շուկայում բոլոր գործարքների մասով բանակցությունների համար (օր.՝ տարեկան մատակարարման պայմանագրեր արդյունաբերական բաժանորդների հետ կամ ժամկետը, երբ առաջարկվող գներն ուղարկվում են կազմակերպված շուկաներին):

5.7. ՀՀՕ-ն հրապարակում է համապատասխան տեղեկությունները առաջարկի կանխատեսումների ու էլեկտրաէներգիայի արտադրության վերաբերյալ՝ 5.5 և 5.6 կետերում նշված ժամկետների համաձայն: ՀՀՕ-ն հրապարակում է նաև համապատասխան տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են միջսահմանային հավասարակշռող շուկայի համար:

5.8. Կանխատեսումների հրապարակվելուն պես պետք է հրապարակվեն նաև կանխատեսված տեղեկությունների փաստացի իրականացած չափը այն ժամանակահատվածի ընթացքում, որի համար արվել էր կանխատեսումը կամ գոնե դրա հաջորդ օրը ($D + 1$):

5.9. ՀՀՕների կողմից հրապարակված բոլոր տեղեկությունները պետք է մատչելի լինեն հեշտ հասանելի եղանակով: Բոլոր տեղեկությունները պետք է հասանելի լինեն տեղեկությունների փոխանակման համապատասխան ու ստանդարտացված եղանակով, որը սահմանվում է շուկայի մասնակիցների հետ սերտ համագործակցության արդյունքում: Տվյալները պետք է ընդգրկեն տեղեկություններ առնվազն երկու տարիների վերաբերյալ այնպես, որ շուկա նոր մուտք գործողները նույնպես կարողանան օգտվել այդ տվյալներից:

5.10. ՀՀՕները պետք է պարբերաբար փոխանակեն ցանցի ու հոսքերի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ, որպեսզի յուրաքանչյուր ՀՀՕ կարողանա հաշվարկել իր համապատասխան տարածքում առաջացող հոսքերը: Նույն տվյալների պետք է մատչելի լինեն կարգավորող մարմիններին ու Հանձնաժողովին իրենց պահանջով: Կարգավորող մարմիններն ու Հանձնաժողովը պետք է ապահովեն այդ տվյալների գաղտնիությունը իրենց կամ այդ տվյալների հիման վրա իրենց համար վերլուծական աշխատանք կատարող ցանկացած խորհրդատուի կողմից:

6. Գերբեռնվածությունից ստացվող եկամուտի օգտագործումը

6.1. Նախօրոք սահմանված ժամկետի հետ կապված գերբեռնվածության կառավարման ընթացակարգերից կարելի է շահույթ ստանալ միայն այդ ժամկետի ընթացքում առաջացող գերբեռնվածության դեպքում՝ բացառությամբ էլեկտրահաղորդման նոր գծերի, որոնց վրա տարածվում է թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգի 7-րդ հոդվածի կամ սույն Կանոնակարգի

17-րդ հոդվածի համաձայն: Նշված շահույթի բաշխման ընթացակարգը վերանայվում է կարգավորող մարմինների կողմից. այն չպետք է խաթարի բաշխման գործընթացը ի օգուտ կարողություն կամ էլեկտրաէներգիա պահանջող որևէ կողմի կամ խոչընդոտի գերբեռնվածության թեթևացման համար:

6.2. Ազգային կարգավորող մարմինները պետք է թափանցիկ կերպով օգտագործեն փոխկապակցման կարողությունների բաշխման արդյունքում ստացված շահույթը:

6.3. Գերբեռնվածության եկամուտը կիսվում է ներգրավված ՀՀՕների միջև՝ ներգրավված ՀՀՕների միջև համաձայնեցված ու համապատասխան կարգավորող մարմինների կողմից վերանայված չափանիշների համաձայն:

6.4. ՀՀՕները նախօրոք սահմանում են, թե ինչպես իրենք պետք է օգտագործեն գերբեռնվածության եկամուտը և հաշվետվություն ներկայացնում այդ եկամտի փաստացի օգտագործման վերաբերյալ: Կարգավորող մարմինները ստուգում են, որ նշված եկամուտն օգտագործվի սույն Կանոնակարգին ու նշված ուղեցույցներին համապատասխան և որ փոխկապակցման կարողությունների բաշխման արդյունքում առաջացող գերբեռնվածության եկամտի հիմնական մասը հատկացվի սույն Կանոնակարգի 16(6) հոդվածով սահմանված երեք նպատակներից առնվազն մեկի իրականացման համար:

6.5. Տարեկան կտրվածքով և մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 31-ը կարգավորող մարմինները հրապարակում են հաշվետվություն, որով սահմանվում է մինչև նույն տարվա հունիսի 30-ը 12-ամսյա ժամանակահատվածի ընթացքում ստացված շահույթի ընդհանուր չափը և տվյալ շահույթի օգտագործման եղանակը, ինչպես նաև հաստատում այն մասին, որ նշված շահույթն օգտագործվել է սույն Կանոնակարգին ու նշված ուղեցույցներին համապատասխան և որ փոխկապակցման կարողությունների բաշխման արդյունքում առաջացող գերբեռնվածության եկամտի հիմնական մասը հատկացվել է սույն սահմանված երեք նպատակներից առնվազն մեկի իրականացման համար:

6.6. Փոխկապակցման կարողությունների պահպանման կամ ավելացման նպատակով կատարվող ներդրումներից ստացվող գերբեռնվածության եկամուտը հիմնականում հատկացվում է նախօրոք սահմանված հատուկ նախագծերին, որոնք նպաստում են առկա գերբեռնվածության թեթևացմանը և որոնք կարող են իրականացվել ողջամիտ ժամկետներում, մասնավորապես ինչ վերաբերում է թույլտվության գործընթացին:

[1] Գործունեության անվտանգություն նշանակում է «հաղորդման համակարգը պահել անվտանգության համաձայնեցված սահմաններում»:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Թիվ 1228/2003 կանոնակարգ (ԵՀ) | Սույն կանոնակարգ |

1-ին հոդված | 1-ին հոդված |

2-րդ հոդված | 2-րդ հոդված |

— | 3-րդ հոդված |

— | 4-րդ հոդված |

— | 5-րդ հոդված |

— | 6-րդ հոդված |

— | 7-րդ հոդված |

— | 8-րդ հոդված |

— | 9-րդ հոդված |

— | 10-րդ հոդված |

— | 11-րդ հոդված |

— | 12-րդ հոդված |

3-րդ հոդված | 13-րդ հոդված |

4-րդ հոդված | 14-րդ հոդված |

5-րդ հոդված | 15-րդ հոդված |

6-րդ հոդված | 16-րդ հոդված |

7-րդ հոդված | 17-րդ հոդված |

8-րդ հոդված | 18-րդ հոդված |

9-րդ հոդված | 19-րդ հոդված |

10-րդ հոդված | 20-րդ հոդված |

11-րդ հոդված | 21-րդ հոդված |

12-րդ հոդված | 22-րդ հոդված |

13-րդ հոդված | 23-րդ հոդված |

14-րդ հոդված | 24-րդ հոդված |

— | 25-րդ հոդված |

15-րդ հոդված | 26-րդ հոդված |

Հավելված | Հավելված I |